72. Իպրոցում ընդամենը 84 սովորող կայ: Աղջիկների թիւը կազմում է տղաների թուի հինգերորդ մասը: Քանի՞ տղայ և քանի՞ աղջիկ են սովորում:

73. Երկու քսակում 455 ռուբլի կայ: Եթէ առաջինը փոխադրենք երկրորդը 20 ռուբլի այն ժամանակ երկրորդի փողը առաջինից վեց անգամ աւելի կը լինի: Ո՞րքան փող կար իւրաքանչիւր քսակում:

IV. ԻՐԵՐԻ ՓՈՒԱՆԱԿՈՒԹԻՒՆ.

74. Մի առևտրական փոխանակեց մի ուրիշի հետ 6 թոփ մահուգ՝ իւրաքանչիւրը 45 արշին, 24 թոփ քաթանի հետ, իւրաքանչիւր թոփը՝ 35 արշին: Մահուգի իւրաքանչիւր արշինն արժէր 2 ռուբլի, իսկ 3 արշին քաթանը՝ 1 ռուբլի: Ո՞րը նրանցից փող պէտք է վճարէ և ո՞րքան:

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ.

ա. Քանի՞ արշին էր 6 թոփ մահուգը:

45 արշին մ.

×6

270 արշ. մ.

բ. Քանի՞ ռուբլի արժէ 270 արշին մահուգը.

2 ռուբլի.

×270

540 ռուբլի.

գ. Քանի՞ արշին էր 24 թոփ քաթանը:

35 արշին ք.

24

140

+70

840 արշին ք.

դ. Քանի՞ ռուբլի արժէ 840 արշ. քաթանը.

$$\begin{array}{r}
 840 \text{ արշ. ք.} \quad | \quad 3 \text{ արշ. ք.} \quad 1 \text{ ռուբ.} \times 280 = 280 \text{ ր.} \\
 -6 \\
 \hline
 24 \\
 -24 \\
 \hline
 0
 \end{array}$$

280 (անգամ)

ե. Ո՞րը երկուսից փող պէտք է վճարէ և ո՞րքան:

540 ռուբ. — 280 ռուբ. = 260 ռուբ.

74. Երկու վաճառական փոխանակում են իրենց ապրանքը: Մէկը տալիս է 2 փութ թէյ, գրուանքան 2 ռուբ. և 20 փութ շաքար, փութը՝ 6 ռուբլի: Միւսը փոխարէնը տալիս է 2 թոփ մահուգ, իւրաքանչիւրը 35 արշին: Ո՞րքան արժէ այդ մահուգի արշինը:

75. Երկու առևտրական համաձայնուեցին ապրանք փոխանակել: Մէկը տուեց 50 փութ իւղ, որի փութն արժէր 12 ռուբլի, իսկ միւսը փոխարէնը տուեց 60 փութ շաքար, որի փութն արժէր 6 ռուբլի: Ո՞րը սրանցից պէտք է լրացնէ և ո՞րքանով:

76. Գեղջիկուհին գնելով զգեստի համար 17 արշին չիթ, որի արշինն արժէր 14 կոպ., փոխարէնը տուեց առևտրականին մի քանի գրուանքայ կովի իւղ, որի գրուանքան արժէր 26 կոպէկ և՛ 30 կոպէկ էլ փող: Քանի՞ գրուանքայ իւղ ստացաւ առևտրականը իբրև փոխանակութիւն:

Կ Ր Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն.

77. Վաճառականը փոխանակեց 224 փութ ցորենի ալիւրը, որի փութն արժէ 2 ռուբլի, 78 փութ շաքարի հետ: Ո՞րքանով պէտք է ծախէ շաքարի մի փութը, որ պէս զի 98 ռուբլի աշխատի:

78. Անիւր 135 արշին տարածութեան վրայ 45 պը-

տոյս սրաւ: Ո՛րքան է անիւի շրջապատը: Ի՞նչ տարածութեան վրայ անիւը 75 պտոյտ կանէ: Քանի՞ պտոյտ կանէ 375 արշին տարածութեան վրայ:

79. 18 փութ մանր շաքարն արժէ 85 ռուբլի: Ո՛րքանով պէտք է վաճառել 54 փութ նոյնպիսի շաքարը, որպէսզի 25 ռուբլի օգուտ ստացուի:

80. 17 փութ ապրանքը 14 վերսա հեռաւորութիւն փոխադրելու համար վճարած է 9 ռուբլի 52 կոպէկ: Ո՛րքան պէտք է վճարել 25 փութ ապրանքը 10 վերսա հեռաւորութիւն փոխադրելու համար:

81. Իւրաքանչիւր 12 արշին քաթանը խանութպանը գնում էր 3 ռուբլի 24 կոպ., իսկ իւրաքանչիւր 7 արշինը նա ծախում էր 2 ռուբլի 10 կոպէկով: Քանի՞ արշին քաթան պէտք է ծախէ խանութպանը, որպէս զի 1 ռուբլի 95 կոպէկ օգուտ ստանայ:

82. Արշինը 3 ռուբլիանոց մի կտոր թաւիչ փոխեցին 20 արշին սև մահուզի և արշինը 4 ռուբլիանոց մի քանի արշին կապոյտ մահուզի հետ: Քանի՞ արշին է կապոյտ մահուզը, եթէ բոլոր թաւիչն արժէ 184 ռուբլի:

83. Գիւղացին գնեց ձի, կով, 7 ոչխար և վճարեց բոլորին 137 ռուբլի: Ձին կովից 15 ռուբլի աւելի արժէր, իսկ իւրաքանչիւր ոչխար նրա վրայ 6 ռուբլի ծախս էր նստել: Ո՛րքան վճարեց գիւղացին ձիու և կովի համար առանձին:

84. Երեք եղբայր իրենց մէջ 624 ռուբլի բաժանեցին. միջնակ եղբայրը 5 անգամ աւելի ստացաւ փոքրից, իսկ մեծ եղբայրը ստացաւ այնքան, որքան միւս երկու փոքր եղբայրները միասին: Ո՛րքան ստացաւ ամեն մի եղբայրը:

85. 765 ռուբլի պէտք է բաժանել 3 այրիների և նրանց գաւակներին մէջ այնպէս, որ իւրաքանչիւր մայր 3 անգամ աւելի ստանայ իւրաքանչիւր երեխայից: Առաջին մայրը 4 գաւակ ունէր, երկրորդը՝ 3 և երրորդը՝

մի: Քանի՞ ռուբլի պէտք է ստանայ իւրաքանչիւր այրին իր գաւակների հետ միասին:

86. Քաղցրաւենի պատրաստելու համար տանտիկինը գնեց 56 գրուանքայ շաքարը 7 ռուբլի 84 կոպէկով և 24 գրուանքայ մորի: Ո՛րքան փող նա գործադրեց այդ առևտուրի համար, եթէ յայտնի է, որ 8 գրուանքայ մորին 4 անգամ աւելի աժան է կէս փութ շաքարից:

87. Մեծ և միջնակ եղբայրները միասին ունեն 1 ռուբլի 36 կոպէկ, մեծ և փոքր եղբայրները՝ 1 ռուբլի 24 կոպէկ, միջնակը և փոքրը միասին՝ 1 ռուբլի 8 կոպ.: Ո՛րքան փող ունի ամեն մի եղբայր:

Ծանօթ. Ո՛րքանով մեծ և միջնակ եղբայրները միասին աւելի են ստանում, քան մեծ և փոքր եղբայրները միասին և ինչո՞ւ:

V. ՈՐՈՇԵԼ ԶԱՆԱԶԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԵՐԲ ՆՐԱՆՔ ՆԱԽԱՍԱՐ ԵՆ ՈՒ ԵՐԲ ՅԱՅՏՆԻ Է ՆՐԱՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԺԷՔԸ ԵՒ ԻՐԱՔԱՆՉԻՐԻ ԱՐԺԷՔՆ ԱՌԱՆՁԻՆ.

88. Դպրոցի համար գնել են հաւասար քանակութեամբ մայրենի լեզու, խնդրագիրք, գեղագրական օրինակներ եւ վճարել են ընդամենը 9 ռ. 75 կ.: Քանի՞ գիրք են գնել իւրաքանչիւր տեսակից, եթէ մայրենի լեզուի ամեն մի օրինակը արժէ 35 կոպ., խնդրագիրքը՝ 25 կոպ., գեղագրական օրինակը՝ 15 կոպէկ:

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ .

ա. Ո՛րքան արժէ մի մայրենի լեզու, մի խնդրագիրք և մի գեղագրական օրինակ միասին:

35 կոպ. + 25 կոպ. + 15 կոպ. = 75 կոպ.
բ. Քանի՞ գիրք են գնել իւրաքանչիւր տեսակից:

(75 կոպէկով կարելի է գնել իւրաքանչիւր գրքից մի մի օրինակ. 9 ռ. 75 կոպէկով կարելի կլինի գնել իւրաքանչիւր

գրքից այնքան օրինակ, որքան անգամ 75 կոպ.-ը պարու-
նակուում է 9 ր. 75 կոպէկի մէջ):

9 ր. 75 կոպ. : 75 կոպ. = 975 կ. : 75 կ. = 13 (օրինակ)

75

225

— 225

0

89. Գործարանում աշխատում են հասակաւորներ և
երեխաներ. իւրաքանչիւր հասակաւորի օրական վճարում են
60 կոպէկ, իսկ իւրաքանչիւր երեխայի՝ 20 կոպէկ: Քանի՞
հասակաւոր և քանի՞ երեխայ են աշխատում գործարա-
նում, եթէ նրանց բոլորին օրական տալիս են 40 ռուբլի
և եթէ հասակաւորների ու երեխաների թիւը հաւասար է:

90. Գնեցին 405 ռուբլով երեք արկղ ծխախոտ, ու-
րոնց քաշը հաւասար է, քայց գները տարբեր. մի արկղ
ծխախոտի գրուանքան արժէ 6 ռուբ., միւսինը՝ 5 ռուբ.
իսկ երրորդինը՝ 4 ռուբլի: Քանի՞ գրուանքայ ծխախոտ
կար իւրաքանչիւր արկղում:

91. Այգեպանը վաճառեց իր տնկարանից 31 ռուբ.
մի քանի խնձորի և տանձի ծառեր: Իւրաքանչիւր տան-
ձենին վաճառեց 20 կոպ., իսկ խնձորենին՝ 30 կոպէկով:
Քանի՞ ծառ վաճառեց այգեպանը իւրաքանչիւր տեսակից,
եթէ վաճառած խնձորենիների թիւը 30-ով պակաս էր
տանձենիների թւից:

92. Վաճառականը գնեց 942 ռուբլով երկու թոփ
զանազան տեսակի մահուղ. կարմիր մահուղը 16 արշին
աւելի էր կապոյտ մահուղից: Քանի՞ արշին է ամեն մի
թոփը, եթէ վաճառականը կարմիր մահուղի իւրաքանչիւր
արշինին վճարեց 9 ռուբլի, իսկ կապոյտ մահուղի արշի-
նին՝ 5 ռուբլի:

VI. ՕԳՈՒՏ ԵՒ ՎՆԱՍ.

93. Դերձակը գնեց 28 արշին մահուղ, արշինը՝ 6 ռուբ.:
Այդ մահուղից նա կտրեց 7 ծեռք զգեստ և ծախեց իւրա-
քանչիւր ծեռք զգեստը 27 ռուբլով: Ո՞րքան օգուտ ստացաւ
դերձակն այդ վաճառքից:

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ .

ա. Ո՞րքանով գնեց դերձակը 28 արշին մահուղը,
եթէ արշինն արժէր 6 ռուբլի:

$$6 \text{ ռուբ.} \times 28$$

168 ռուբլի.

բ. Ո՞րքանով ծախեց նա 7 ձեռք զգեստը, եթէ իւ-
րաքանչիւր ձեռքն արժէր 27 ռուբլի:

$$27 \text{ ռուբ.} \times 7$$

189 ռուբլի.

գ. Ո՞րքան օգուտ ստացաւ դերձակն այդ վաճառքից.

189 ռուբ.

— 168 »

» 21 ռուբ.

94. Չիապանը գնեց 12 ձի և վճարեց իւրաքանչիւ-
րին 35 ռուբլի: Նա իւրաքանչիւր 3 ձին ծախեց 100 ռուբ.
Ո՞րքան փնասուեց ձիապանն այդ ձիերը վաճառելուց:

95. Խանութպանը գնեց 15 փութ իւղ և այնպէս
վաճառեց, որ փթին 4 ռուբլի օգուտ ստացաւ: Այդպի-
սով նա 180 ռուբլի օգուտ ունեցաւ: Քանի՞ ռուբլու իւղ
է գնել խանութպանը և ո՞րքան է վճարել ամեն մի փթին:

96. Վաճառականը գնեց 30 արշին կտաւ, արշինը՝
9 կոպէկ և յետոյ ծախեց ու ստացաւ 60 կոպէկ օգուտ:
Ո՞րքանով ծախեց վաճառականը կտաւի իւրաքանչիւր ար-
շինը:

97. Վաճառականը իւրաքանչիւր վերարկուն, որ իր
վրայ նստել է 27 ռուբլի, ծախում է 35 ռուբ.: Քանի՞

այդպիսի վերարկու է վաճառել վաճառականը, եթէ 560
րուբլի օգուտ է ստացել:

98. Գործարանում 36 արշին քիշմիրը ծախում են
24 րուբլով, իսկ խանութում իւրաքանչիւր 20 արշինը
ծախում են 18 րուբլով: Ո՞րքան օգուտ կստանայ խա-
նութպանը, եթէ ծախէ 180 արշին քիշմիր:

99. Մսագործը գնում է իւրաքանչիւր 6 փութ միսը
25 րուբլով, իսկ ծախում է իւրաքանչիւր 8 փութը 42
րուբլով: Ո՞րքան օգուտ կստանայ մսագործը, եթէ վա-
ճառէ 72 փութ միս:

100. Խանութպանը գնեց մի քանի փութ կարագ,
փութը 12 րուբ.: Այդ իւղի 3 փութը փչացաւ և չծախ-
ուեց. մնացած իւղի փութը ծախելով 15 րուբ., նա ծած-
կեց վնասը և ստացաւ 90 րուբլի մաքուր օգուտ: Քանի՞
փութ իւղ էր գնել խանութպանը:

101. Մանրավաճառը նարինջներն և կիտրոնները
վաճառելով 9 ռ. 10 կոպ., ստացաւ իւրաքանչիւր ծախ-
սած կէս րուբլիանոցի դիմաց 15 կոպէկ օգուտ: Ո՞րքան
օգուտ ստացաւ նա ընդամենը:

Ծանօթ.— Մանրավաճ. ի ստացած 9 ռ. 10 կ.-ի մէջ պա-
րունակուում է հաւասար քանակութեամբ ինչպէս կէս րուբլիանոց-
ներ, որոնք կազմում են այդ գումարի մէջ գնած ապրանքի ար-
ժէքը, նոյնպէս և 15 կոպէկները, որոնք ցոյց են տալիս այդ
գումարի միջի օգուտը: Ուրեմն, որպէս զի օգուտը բաժանենք
արժէքից (կամ ընդհակառակը), հարկաւոր է վերցնել 15 կոպէկ
կամ կէս րուբլիանոց, իւրաքանչիւրից առանձին այնքան անգամ,
որքան անգամ 9 ռ. 10 կոպ.-ի մէջ պարունակուում է 65 կոպէկ:

Սոյնանման խնդիրները պատկանում են «Օգուտը արժէքից
բաժանելու» խնդիրների տեսակին:

102. 18 գրուանքայ ալիւրից ստացուում է այդ քա-
շից 5 գրվ. աւելի հաց: Ո՞րքան ալիւրից կարելի կը լինի
ստանալ 161 գրուանքայ հաց:

VII. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈՒԱՐԻՆՈՒՄ.

103. Գնուած է 18 գրուանքայ թէյ և 24 գրուանքայ
շաքար 270 րուբլու: Շաքարի մի փութը երեք անգամ թէյի
մի գրուանքայից աւելի թանգ արժէ: Ո՞րքան արժէ թէյի
մի գրուանքան և շաքարի մի փութը:

Այս խնդիրը կարելի է լուծել երկու կերպ. կամ շաքարը
հաւասար արժէք թէյով փոխարինելով, կամ, ընդհակառակը,
թէյը՝ շաքարով: Վերցնելով 24 փութ շաքարի փոխարէն միևնոյն
արժէքն ունեցող 24 անգամ 3 գրուանքայ թէյ, մենք կը տես-
նենք, որ 18 գրուանքայ թէյը և 72 գրուանքայ միևնոյն տեսակ
թէյը (ուրեմն ամբողջ 90 գրուանքայ թէյը) արժէ 270 րուբլի:
Ուրեմն մի գրուանքան կարժեհայ 270 րուբ.: 90=3 րուբ. հայն:

104. Մէկը 54 արշին դրափ և 45 արշին մահուդ
գնեց 207 րուբլով: Ո՞րքան արժէ իւրաքանչիւր տեսակի
արշինը, եթէ դրափի մի արշինը մահուդի մի արշինից
երեք անգամ աւելի թանգ արժէ:

105. 18 գրուանքայ կեռասը և 8 գրուանքայ հա-
ղարճն արժէ 3 րուբլի 42 կոպէկ: Ո՞րքան արժէ մի գրու-
անքայ կեռասը և մի գրուանքայ հաղարճը, եթէ 3
գրուանքայ կեռասի գինը հաւասար է 5 գրուանքայ հա-
ղարճի գնին:

106. Գնել են 13 փութ պղինձը և 29 փութ երկաթը
486 րուբլով: Ո՞րքան արժէ պղինձի մի փութը և երկաթի
մի փութը, եթէ երկաթը չորս անգամ աւելի աժան է
պղինձից:

107. Մի շաքաթուայ աշխատանքի համար 24 բան-
ւոր և 45 բանւորուհի ստացան կալուածատիրոջից 396
րուբլի: Ո՞րքան է մի բանւորի և մի բանւորուհու շաքաթա-
կան աշխատավարձը, եթէ 9 բանւորուհին շաքաթա-
կան ստանում են այնքան, որքան 4 բանւորը:

VIII. ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ.

108. Բանտորների երեք արտել աշխատեցին 940 ըուբլի եւ քաժանեցին իրենց մեջ՝ աշխատած օրերի համեմատ: Առաջին արտելը աշխատել էր 20, երկրորդը՝ 12 եւ երրորդը՝ 15 օր: Ո՞րքան ստացաւ իւրաքանչիւր արտել:

Լ ՈՒ Ծ ՈՒ Մ.

ա. Քանի օրուայ աշխատանքի համար են ստացել երեք արտելը միասին 940 ըուբլի:

$$20 \text{ օր.} + 12 \text{ օր.} + 15 \text{ օր.} = 47 \text{ օր.}$$

բ. Ո՞րքան է մի օրուայ աշխատավարձը.

940 ըուբլ.		47
- 94		20 ըուբլ.
0		

գ. Ո՞րքան ստացաւ առաջին արտելն իր աշխատած 20 օրուայ համար:

$$20 \text{ ըուբլ.} \times 20 = 400 \text{ ըուբլ.}:$$

դ. Ո՞րքան ստացաւ երկրորդ արտելն իր աշխատած 12 օրուայ համար.

$$20 \text{ ըուբլ.} \times 12 = 240 \text{ ըուբլ.}:$$

ե. Ո՞րքան ստացաւ երրորդ արտելն իր աշխատած 15 օրուայ համար:

$$20 \text{ ըուբլ.} \times 15 = 300 \text{ ըուբլ.}:$$

109. Երեք հարկան գիւղ ընդհանուր զուամարով գնեցին անտառի մի հողաբաժին 955 ըուբլով և իրենց պայմանի համաձայն, փողը վճարեցին իւրաքանչիւր գիւղի մարդկանց թուի համեմատ: Ո՞րքան պէտք է վճարէ իւրաքանչիւր գիւղ, եթէ առաջին գիւղում՝ 72, երկրորդում՝ 54, իսկ երրորդում՝ 65 մարդ կար:

110. Երեք մանրավաճառ 5 ըուբլ. 20 կոպէկով մի քանի գրուանքայ մորի գնեցին, Առաջինը վերցրեց 17 գրվ.,

երկրորդը՝ 20 գրվ., իսկ երրորդը՝ 28 գրվ.: Ո՞րքան պէտք է վճարէ նրանցից իւրաքանչիւրը:

111. Երեք աշակերտ գնեցին միասին 35 տետր. մէկը տուեց այդ առևտուրի համար 36 կոպէկ, միւսը՝ 48 կոպէկ և երրորդը՝ 56 կոպէկ: Քանի տետր աւելի վերցրեց երրորդ աշակերտը առաջինից:

112. Հող փորոզների երկու արտել աշխատեցին 436 ըուբլի. առաջին արտելը, որ բաղկացած էր 14 մարդուց, աշխատել էր 4 օր, երկրորդ արտելը, որ 18 հոգուց էր բաղկացած, աշխատեց 9 օր: Ո՞րքան պէտք է ստանայ իւրաքանչիւր արտելն իր աշխատանքի համար:

113. Կառապանը յանձն առաւ 15 ըուբլով փոխադրել 30 փութ երկաթ 5 վերստ տարածութիւն և 50 փութ պղինձ՝ 7 վերստ: Ո՞րքան ալժէ ամեն մի փոխադրութիւնն առանձին:

Կ Ր Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն.

114. Երեք մարդ վեր եկան 891 ըուբլի և գնեցին մի քանի սաժէն մայրի փայտ. մէկը վերցրեց 8 սաժէն, երկրորդը՝ 10 սաժէն և երրորդը՝ 15 սաժէն փայտ: Ո՞րքան վճարեց նրանցից իւրաքանչիւրը:

115. Առևտրականը ծախեց երկու տեսակ սուրճ. առաջին տեսակը 9 ըուբլ. 44 կոպէկով, և ստացաւ իւրաքանչիւր իր ծախած ըուբլու համար 18 կոպէկ օգուտ. երկրորդ տեսակը՝ 9 ըուբլ. 57 կոպ. և ստացաւ իւրաքանչիւր իր ծախած ըուբլու համար 13 կոպ. վնաս: Ո՞րքան օգուտ կամ վնաս ստացաւ առևտրականը այդ երկու տեսակ սուրճի վաճառքից:

116. Գործարանում 2 առկական տօնի առիթով իւրաքանչիւր գործակատար ստանում է 4 անգամ աւելի նուէր, քան իւրաքանչիւր բանուոր: Գործարանի բոլոր բանուորների թիւն է 84, իսկ գործակատարների թիւը՝ 5:

Մրանց բոլորին տրուեց 832 ըուբլի նուէր: Ո՞րքան նուէր պէտք է ստանայ տօնի պատճառով մի քանորը և մի գործակատարը:

117. Տուել վերանորոգելու համար վարձած 9 հիւսնին, 4 ներկարարին և 5 վառարանագործին վճարուած է 420 ըուբլի: Իւրաքանչիւր հիւսնի վճարել են 2 անգամ, իսկ իւրաքանչիւր ներկարարին՝ 3 անգամ աւելի, քան իւրաքանչիւր վառարանագործին: Ո՞րքան են վճարել իւրաքանչիւրին:

118. Գործարանում աշխատում են տղամարդիկ և կանայք. տղամարդկանց թիւը երեք անգամ աւելի է կանանցից. իւրաքանչիւր տղամարդ ստանում է շաբաթական 9 ըուբլի, իսկ իւրաքանչիւր կին՝ 4 ըուբլի: Քանի տղամարդ և քանի կին կայ գործարանում, եթէ նրանք բոլորը շաբաթական աշխատում են 589 ըուբլի:

119. Գործարանում 25 կնոջ և 46 տղամարդու վճարեցին 305 ըուբլի: Ո՞րքան ստացաւ իւրաքանչիւր կին և իւրաքանչիւր տղամարդ, եթէ 5 կնոջ այնքան էին վճարում, որքան 3 տղամարդու:

120. Գնեցին մի քանի արշին թաւիշ և մահուզ և բոլորին վճարեցին 850 ըուբլի: Թաւիշի արշինն արժէ 8 ըուբլի, իսկ մահուզի արշինը՝ 3 ըուբլի: Քանի արշին էր թաւիշը, եթէ այն երեք անգամ պակաս է մահուզից:

IX. ԳՏՆԵԼ ՄԱՍԵՐԸ, ԵՐԲ ՅԱՅՏՆԻ Է ԱՄԲՈՂՋԸ ԵՒ ԳՏՆԵԼ ԱՄԲՈՂՋԸ, ԵՐԲ ՅԱՅՏՆԻ ԵՆ ՄԱՍԵՐԸ.

121. Քանի մսխալ է՝ $1/2, 1/3, 2/3, 1/4, 3/4, 1/8, 7/8$ $5/6$ գրուանքան:

122. Քանի գրուանքայ է՝ $1/2, 1/4, 3/4, 2/5, 4/5, 7/8, 9/10, 11/20$ փոլթը:

123. Ես ունեմ 72 կոպէկ: Գանել իմ փողի՝ $1/2, 1/3, 2/3, 1/4, 3/4, 5/8, 7/9, 11/12$ մասը:

124. Քանի կոպէկ է՝ $1/2, 1/4, 3/4, 2/5, 3/10, 7/20, 8/25, 11/50$ ըուբլին:

125. Քանի վերջոկ է՝ $1/2, 1/4, 3/4, 3/8, 5/8, 7/16$ արշանը:

126. Քանի սաժէն է՝ $3/5, 3/4, 7/10, 11/20, 13/25, 19/50, 7/100$ վերստը:

127. Ո՞րքան է՝ 135-ի $2/5$, 240-ի $3/5$, 560-ի $3/8$, 720-ի $5/6$ մասը:

128. Ո՞րքանով 81-ի $5/9$ մասը մեծ է կամ փոքր 84-ի $7/12$ մասից:

129. Մի երեխայ ունէր 45 կոպէկ. այդ փողի $4/9$ մասով նա գիրք գնեց: Ո՞րքան է վճարել գրքին:

130. Մսի գրուանքան արժէ 16 կոպէկ. ո՞րքան պէտք է վճարել $3/4$ գրվ. $5/8$ գրվ.:

131. Գումարել 100-ի $2/5$ -ը, 75-ի $1/25$ -ը և 60-ի $7/15$:

132. Թէյի գրուանքան արժէ 4 ըուբլի 80 կոպէկ: Ո՞րքան պէտք է վճարել $1/2, 3/4, 5/8$ գրուանքայ թէյին:

133. Երեք դասարանում սովորում են 96 երեխայ. երրորդ դասարանում սովորում է բոլոր երեխաների $1/6$ մասը, երկրորդում՝ էլի բոլոր երեխաների $3/8$ մասը, իսկ մնացածը սովորում են առաջնում: Քանի աշակերտ կայ առաջին դասարանում:

134. Գիւղացին 2 արտում 87 փուլ ցորեն ցանեց. մէկում նա ցանեց ամբողջի $2/3$ մասը, իսկ միւսում՝ մնացածը: Առաջին արտը տուեց մէկին—5, իսկ երկրորդը՝ մէկին 7 բերք: Ո՞րքան ցորեն ժողովեց գիւղացին ամեն մի արտից:

135. Երեք եղբայր աշխատեցին 490 ըուբլի. մեծ եղբայրն աշխատեց բոլոր փողի $3/7$ մասը, միջնակը՝ $5/7$ մասը, իսկ մնացածն աշխատեց փոքր եղբայրը: Քանի ըուբլի աշխատեց փոքր եղբայրը:

136. Առևտրականը գնեց $\frac{3}{4}$ փութ թէյ 60 ռուբլու: Նա այդ թէյը ծախելով, 30 ռուբլի օգուտ ստացաւ: Ո՞րքանով ծախեց թէյի մի գրուանքան:

137. Իմ փողի $\frac{1}{8}$ մասը հաւասար է 12 ռուբլու: Ո՞րքան է իմ ամբողջ փողը:

138. Բուբլու ո՞ր մասն է 20 կոպ., 25 կոպ., 50 կ.-ը:

139. 20-ը ո՞ր թուի $\frac{2}{3}$, $\frac{4}{5}$, $\frac{5}{7}$, $\frac{5}{12}$ մասն է կազմում:

140. Գտնել այն ամբողջ թիւը, որի $\frac{1}{2}$ -ը=48, $\frac{1}{4}$ -ը=55, $\frac{1}{8}$ -ը=25, $\frac{2}{3}$ -ը=360, $\frac{3}{4}$ -ը=180, $\frac{4}{9}$ -ը=240, $\frac{3}{5}$ -ը=270, $\frac{7}{12}$ -ը=490:

141. $\frac{3}{4}$ գրուանքայ թէյին վճարեցին 1 ռուբլի 50 կոպէկ: Ո՞րքան արժէ այդ թէյի գրուանքան:

142. Իմ պարտքի $\frac{5}{8}$ մասը=25 ռուբլու: Ո՞րքան է իմ ամբողջ պարտքը:

143. Եթէ անյայտ թուի $\frac{3}{4}$ -ին աւելացնենք 130, կստանանք 400: Գտնել անյայտ թիւը:

144. Քոյրը 36 տարեկան է, իսկ նրա տարիքը կազմում է եղբոր տարիքի $\frac{5}{7}$ մասը: Քանի՞ տարեկան է եղբայրը:

145. Գիւղացին ծախեց իր ունեցած բոլոր խոտի $\frac{3}{5}$ մասը և նրա մօտ մնաց 250 փութ: Քանի՞ փութ խոտ ունէր գիւղացին և ո՞րքանը վաճառեց:

146. Ես իմ ունեցած փողի $\frac{9}{15}$ մասով գնեցի երեք գիրք, հատը 15 կոպէկով: Ո՞րքան փող մնաց ինձ մօտ:

147. Եթէ մահուզի թոփից կտրենք $\frac{7}{12}$ մասը, կ'մնայ 20 արշին: Քանի՞ արշին է մահուզի թոփը:

X. Հ Ա Ն Գ Ի Պ Ո Ւ Մ .

148. Երկու քաղաքների միջի հեռավորութիւնն է 900 վերստ. այդ քաղաքներից միմեանց հանդէպ դուրս եկան միաժամանակ երկու գնացք. մէկը մ'ի ժամում անցնում է 27 վերստ, իսկ մ'իսը՝ 18 վերստ: Քանի՞ ժամից յետոյ նրանք կը հանդիպեն իրար:

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ .

ա. Քանի՞ վերստ ճանապարհ են անցնում երկու գր-նացքը միասին մի ժամում:

(Քանի՞ վերստ է պակասում երկու գնացքների միջի հեռավորութիւնը մի ժամում):

բ. Քանի՞ ժամից յետոյ երկու գնացքները կհանդիպեն իրար (կամ քանի՞ ժամում երկու գնացքները կանցնեն իրենց միջև եղած ամբողջ տարածութիւնը), եթէ կայարանների միջի հեռավորութիւնը 900 վերստ է:

$$900 \text{ վ.} : 45 \text{ վ.} = 20 \text{ (ժամ)}$$

$$\frac{90}{0}$$

149. Երկու ժարդ գնում են իրար հանդէպ. մէկն անցնում է օրական 28 վերստ, իսկ մ'իսը՝ 35 վերստ: Քանի՞ օրից յետոյ նրանք կհանդիպեն իրար և հանդիպումից յետոյ իւրաքանչիւրը էլի քանի՞ վերստ պէտք է անցնի, եթէ նրանց միջև եղած հեռավորութիւնը 315 վերստ է:

150. Երկու գիւղացի 18 ժամից յետոյ միմեանց հանդիպեցին. առաջինը անցնում էր ամեն մի ժամում 6 վերստ, իսկ երկրորդը՝ 8 վերստ: Ո՞րքան է այն երկու կէտերի միջի հեռավորութիւնը, որ տեղերից նրանք դուրս եկան:

151. Երկու հակառակ կայարաններից դուրս եկան երկու գնացք և գնում էին միմեանց հանդէպ. նրանք 20 ժամից յետոյ հանդիպեցին իրար: Գնացքներից մէկը մի ժամում անցնում է 25 վերստ: Քանի՞ վերստ է անցնում երկրորդ գնացքը մի ժամում, եթէ կայարանների միջի հեռավորութիւնը 900 վերստ է:

152. Միմեանցից 360 վերստ հեռավորութեան վրայ գտնուող երկու քաղաքներից միաժամանակ դուրս եկան իրար հանդէպ երկու գնացք՝ պոստատար և ապրանքա-

տար: Առաջինը կարող է անցնել ամբողջ երկու քաղաք-
ների միջի տարածութիւնը 9 ժամում, իսկ երկրորդը՝
18 ժամում: Քանի՞ ժամից յետոյ գնացքները միմեանց
կը հանդիպեն:

153. Երկու նաւահանգստից, որոնք միմեանցից հեռու
են 456 վերսա, դուրս եկան միմեանց հանդէպ երկու շո-
գենաւ և 12 ժամից յետոյ հանդիպեցին իրար: Ո՞րքան
է անցնում մի ժամում իւրաքանչիւր շոգենաւ և ո՞րքան
տարածութիւն կանցնի իւրաքանչիւրը մինչև հանդիպելը,
եթէ նրանցից մէկը միւսից մի ժամում 8 վերսա աւելի
է անցնում:

154. Երկու քաղաքներից, որոնց միջի տարածու-
թիւնը 484 վերսա է, դուրս եկան տարբեր ժամանակնե-
րում միմեանց հանդէպ երկու գնացք. ապրանքատարը
մի ժամում անցնում էր 28 վերսա, իսկ մարդատարը՝ 32
վերսա: Երբ մարդատարն անցաւ 288 վերսա, հանդիպեց
ապրանքատար գնացքին: Ո՞րը նրանցից վաղ էր դուրս
եկել և քանի՞ ժամով:

XI. ՄԷԿԸ ՇԵՏԱՊՆԴՈՒՄ Ե ՄԻՍԻՆ.

155. Գիւղից քաղաք մեկնեցին տարբեր ժամանակնե-
րում երկու զիւղացի. առաջինը անցնում է մի ժամում 4
վերսա, իսկ երկրորդը՝ 5 վերսա: Գիւղից 120 վերսա հեռա-
ւորութեան վրայ երկրորդ զիւղացին հասաւ առաջինին: Առա-
ջին զիւղացին որս գալուց քանի՞ ժամ յետոյ է դուրս եկել
երկրորդ զիւղացին:

Լ ՈՒԾ ՈՒՄ.

ա. Քանի՞ ժամում է անցել առաջին զիւղացին 120
վերսառը.

$$\begin{array}{r} 120 \text{ վ.} : 4 \text{ վ.} = 30 \text{ (ժամ)}. \\ \underline{-12} \\ 0 \end{array}$$

բ. Քանի՞ ժամում է անցել երկրորդ զիւղացին 120
վերսառը.

$$\begin{array}{r} 120 \text{ վ.} : 5 \text{ վ.} = 24 \text{ (ժամ)} \\ \underline{-10} \\ 20 \\ \underline{-20} \\ 0 \end{array}$$

գ. Առաջին զիւղացու մեկնելուց քանի՞ ժամ յետոյ
է դուրս եկել երկրորդ զիւղացին.

$$30 \text{ ժ.} - 24 \text{ ժ.} = 6 \text{ ժ.}$$

156. Սուրհանդակը մեկնեց առաւօտեան ժամը 7-ին
և իւրաքանչիւր ժամում անցնում է 12 վերսա: Կէսօրից
յետոյ ժամը 2-ին նրանց յետևից ուղարկուեց մի ուրիշ
սուրհանդակ, որ մի ժամում անցնում է 15 վերսա: Քա-
նի՞ ժամից յետոյ և ե՞րբ երկրորդ սուրհանդակը կը հասնի
առաջինին:

157. Ցերեկուայ ժամը 12-ին նաւահանգստից դուրս
եկաւ մի շոգենաւ, որ մի ժամում անցնում էր 16 վերսա:
Երեկոյեան ժամը 7-ին միևնոյն ուղղութեամբ մեկնեց մի
ուրիշ շոգենաւ և հասաւ առաջինին 8 ժամից յետոյ: Քա-
նի՞ վերսա էր անցնում ամեն մի ժամում երկրորդ շո-
գենաւը:

158. Իջևանից երեկոյեան ժամը 7-ին դուրս եկաւ
մի սուրհանդակ, որ անցնում էր ամեն մի ժամում 8
վերսա. ցերեկուայ ժամը 3-ին միևնոյն ճանապարհով և
միևնոյն ուղղութեամբ մեկնեց հեծանիււաւորը և սուր-
հանդակին հասաւ երեկոյեան ժամը 11-ին: Քանի՞ վերսա
էր անցնում ամեն մի ժամում հեծանիււաւորը:

159. Երկու քաղաքների միջի տարածութիւնը մար-
դատար գնացքը անցնում է 15 ժամում, իսկ ապրանքա-
տար գնացքը՝ 33 ժամում: Ո՞րքան է այդ քաղաքների
միջի տարածութիւնը, եթէ մարդատար գնացքը իւրա-
քանչիւր ժամում 30 վերսա աւելի է անցնում ապրան-
քատարից:

XII. ՈՐՈՇԵԼ ԺԱՄԱՆԱԿԸ, ԵՐԲ ՓՈՓՈԽՒՈՒՄ Է

ԱՇԽԱՏԱՒՈՐԱԿԱՆ ՈՅԺԻ ՔԱՆԱԿԸ.

160. 765 սաժէն փայտ փոխադրելու համար սկզբում վարձեցին 27 սայլ, 5 օր անցնելուց յետոյ՝ դարձեալ 13 սայլ: Քանի՞ օրում փոխադրեցին ըստ փայտը, եթէ յայտնի է, որ իւրաքանչիւր սայլ օրական փոխադրում էր 3 սաժէն:

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ.

ա. Քանի՞ սաժէն փայտ են փոխադրել 27 սայլը 5 օրում.

3 սաժ. $\times 27 = 81$ սաժէն, 81 սաժ. $\times 5 = 405$ սաժէն.

բ. Քանի՞ սայլով պէտք է փոխադրել 5 օրից յետոյ մնացած փայտը.

27 սայլ $+ 13$ սայլ $= 40$ սայլ

գ. Քանի՞ սաժէն փայտ է մնում փոխադրելու 40 սայլով.

765 սաժ. $- 405$ սաժ. $= 360$ սաժ.

դ. Քանի՞ սաժ. փայտ են կրում օրական 40 սայլով.

3 սաժ. $\times 40 = 120$ սաժ.

ե. Քանի՞ օրում փոխադրեցին 40 սայլով փայտի մնացած մասը.

360 սաժ. $: 120$ սաժ. $= 3$ (օր)

զ. Քանի՞ օրում փոխադրեցին ամբողջ փայտը.

5 օր. $+ 3$ օր. $= 8$ օր.

161. 620 սաժէն երկարութեամբ մի խճուղի նորոգելու համար վարձեցին 8 բանուոր. 4 օր անցնելուց յետոյ տեսան, որ այդ աշխատանքն իր ժամանակին վերջացնելու համար հարկաւոր է վարձել 7 մարդ: Քանի՞ օրում վերջացաւ ամբողջ ճանապարհի աշխատանքը, եթէ իւրաքանչիւր բանուոր նորոգում էր օրական 10 սաժ. տարածութիւն:

162. 818 վեդրո ջուրն աւազանից դուրս թափելու համար անցկացրին սկզբում երկու խողովակ, իսկ 10 ընդէից յետոյ աւելացրին դարձեալ երկու խողովակ: Քանի՞ ընդէից յետոյ դատարկուեց աւազանը, եթէ յայտնի է, որ առաջին երկու խողովակներից իւրաքանչիւրը մի ընդէում դուրս էր թափում 13 վեդրո, իսկ միւս երկուսից իւրաքանչիւրը՝ 18 վեդրո ջուր:

163. Զինուորներին 9 օր կերակրելու համար գնեցին 900 գրուանքայ հաց, իւրաքանչիւր զինուորին հաշւելով օրական 2 գրուանքայ հաց. Երեք օրից յետոյ զինուորների թիւը պակասեց 25-ով: Քանի՞ օր կը բաւականանայ գնած հացը:

164. 432 թերթից բաղկացած մի աշխատութիւն արտագրելու համար հրաւիրեցին 14 գրագիր, իսկ 2 օրից յետոյ կրկին 6 գրագիր: Քանի՞ օրում կարտագրեն ամբողջ աշխատութիւնը, եթէ իւրաքանչիւր գրագիր արտագրում էր օրական 4 թերթ:

XIII. ԶՐԱՄԲԱՐ.

165. Մի ջրամբար, որ տանում է 480 վեդրո ջուր, 2 ծորակ ունի. մի ծորակից իւրաքանչիւր ընդէում դուրս է թափում 12 վեդրո, իսկ միւս ծորակից՝ 8 վեդրո ջուր: Քանի՞ ընդէից յետոյ ջրամբարը կը դատարկուի, եթէ երկու ծորակն էլ բաց անենք միաժամանակ:

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ.

ա. Քանի՞ վեդրո ջուր է դուրս թափում երկու խողովակով մի ընդէում.

12 վ. ջ. $+ 8$ վ. ջ. $= 20$ վ. ջ.

բ. Քանի՞ ըրպէից յետոյ ջրամբարը կը դատարկուի, եթէ երկու ծորակն էլ միաժամանակ բաց անենք.

$$\begin{array}{r|l}
 480 \text{ վ. ջ.} & 20 \text{ վ. ջ.} \\
 -40 & 24 \text{ (ըրպ.)} \\
 \hline
 80 & \\
 -80 & \\
 \hline
 0 &
 \end{array}$$

166. Աւազանն ունի երկու խողովակ. առաջին խողովակով ներս է լցուում 5 վեդրո ջուր, իսկ երկրորդ խողովակով՝ 7 վեդրո: Ո՞րքան ժամանակում կլցուի աւազանը երկու խողովակով, եթէ առաջին խողովակը 6 ժամ աւելի վաղ է բացուած և եթէ աւազանի մէջ տեղաւորուում է 390 վեդրո ջուր:

167. Մի ջրամբար, որ տանում է 930 տակառ ջուր, ունի 3 խողովակ. մէկ խողովակով լցուում է 6 ժամում, միւսով՝ 10, իսկ երրորդով՝ 15 ժամում: Քանի՞ ժամից յետոյ կլցուի ջրամբարը, եթէ բաց անենք բոլոր երեք խողովակները միասին:

168. Աւազանը, որ տանում է 990 վեդրո ջուր, ունի երեք խողովակ. առաջին խողովակով աւազանը լրցուում է 15 ժամում, իսկ երկրորդով՝ 9: Եթէ բաց անենք բոլոր երեք խողովակներն էլ, այն ժամանակ աւազանը կլցուի 5 ժամում: Քանի՞ ժամում միմիայն երրորդ խողովակով աւազանը կարող է ջրով լցուել:

169. Աւազանում տեղաւորուում է 960 վեդրո ջուր. եթէ բաց անենք միանգամից երկու խողովակը, նա կը լցուի 16 ժամում, իսկ եթէ բաց անենք մի խողովակը, կլցուի 24 ժամում: Քանի՞ ժամում երկրորդ խողովակով կարող է լցուել աւազանը:

170. Փայտեայ ջրամբարն ունի երկու խողովակ: Առաջին խողովակով ջրամբարն է լցուում մի ըրպէում 13 վեդրո, իսկ երկրորդ խողովակով ջրամբարից դուրս է հոսում մի ըրպէում 8 վեդրո ջուր: Քանի՞ ըրպէում կը

լցուի այդ ջրամբարը, որ տանում է 435 վեդրո ջուր, եթէ միաժամանակ երկու խողովակն էլ բաց անենք:

Ծանօթ. — Նախ պէտք է իմանալ, թէ քանի՞ վեդրո ջուր կ'լցուի աւազանում, եթէ երկու խողովակն էլ մի ըրպէ բաց անան: Ապա հարկաւոր է իմանալ, թէ քանի՞ ըրպէում կլցուի ջրամբարը, եթէ երկու խողովակներն էլ միաժամանակ բացուեն:

Կ Ր Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն .

171. Առևտրականը ծախեց 19 փութ շաքար, փութը 6 ըուբ., և մի քանի փութ թէյ, գրուանքան 3 ըուբ.: Զեռք բերած փողերով նա գնեց 12 փութ սուրճ, փութը 17 ըուբլով: Քանի՞ գրուանքայ թէյ ունէր առևտրականը:

172. Երկու թոփ մահուղը 95 արշին է. միայն մի թոփը միւսից 15 արշին աւելի է: Ո՞րքան պէտք է վճարել իւրաքանչիւր թոփին, եթէ յայտնի է, որ մեծ թոփի իւրաքանչիւր 5 արշինն արժէ 16 ըուբլի, իսկ փոքր թոփի իւրաքանչիւր 4 արշինը՝ 13 ըուբլի:

173. Առևտրականը 30 արշին քաթանը 9 ըուբ. 54 կոպ. ծախելով, իւրաքանչիւր ծախսած 50 կոպէկի դիմաց ստացաւ 13 կոպ. օգուտ: Ո՞րքանով է նա գնել քաթանի արշինը:

174. Գեղջիկուհին գնեց 23 արշին շիթ և 7 արշին ժանեակ (հաշիա): Նա առաջինին վճարեց 4 ըուբ. 14 կոպ.: Ո՞րքան նա ծախեց այդ ամբողջ առևտուրի համար, եթէ ժանեակի մի արշինը երեք անգամ աւելի աժան էր քան շիթի մի արշինը:

175. 26 գրուանքայ թէյին և 28 փութ շաքարին վճարել են 304 ըուբլի. թէյի իւրաքանչիւր գրուանքան 4 ըուբլի աւելի աժան է շաքարի իւրաքանչիւր փթի գնից: Ո՞րքան են վճարել մի գրուանքայ թէյին և ո՞րքան՝ մի փութ շաքարին:

176. Ես ծախսել եմ այսօր 100 ըուբլու ⁷/₂₀ մասը. երեկուայ ծախսածս հաւասար է այսօրուայ ծախսածիս

⁵/₇ մասին: Ո՞րքան փող եմ ծախսել ես այդ երեք օրուայ ընթացքում:

177. Գործարանը տաքացնելու համար գնել են 970 ըուբլու բոխի փայտ՝ սաժէնը 35 ըուբ., և չամի փայտ՝ սաժէնը 27 ըուբ.: Քանի՞ սաժէն փայտ են գնել իւրաքանչիւր տեսակից, եթէ յայտնի է, որ բոխի փայտը երկու անգամ աւելի թանկ է միւսից:

178. Սեղանի երկու արկղում դրուած էր 8 ըուբ. 45 կոպէկ. երբ իւրաքանչիւրից հանեցին 85-ական կոպէկ, այն ժամանակ մի արկղում միւսից 4 անգամ աւելի մնաց: Ո՞րքան փող կար իւրաքանչիւր արկղում:

179. 12 աշխատաւոր, աշխատելով օրական 8 ժամ, 10 օրում ստացան 60 ըուբլի: Քանի՞ ժամ օրական պէտք է աշխատեն 4 աշխատաւոր, որպէս զի 2 օրուայ աշխատանքի համար ստանան 6 ըուբլի:

180. Մի գեղջիկուհի իր փողի ⁵/₈ մասով գնեց արշինը 18 կոպէկանոց 15 արշին չիթ, իսկ միւսը իր փողի ⁴/₉ մասով արշինը 14 կոպէկանոց 24 արշին չիթ գնեց: Ո՞րքան փող մնաց իւրաքանչիւր գեղջիկուհուն:

181. Երկու կայարանից, որոնց միջի հեռաւորութիւնը 135 վերստ է, առաւօտեան ժամը 5-ին դուրս եկան միաժամանակ և միևնոյն ուղղութեամբ երկու գնացք. առաջինն ամէն մի ժամում անցնում է 34 վերստ, իսկ երկրորդը՝ 43 վերստ: Ե՞րբ երկրորդ գնացքը կը հասնի առաջին:

182. Աւագանից ջուրը դուրս թափելու համար դրին երկու ջրհան մեքենայ. առաջինը դուրս է թափում մի ըուպէում 15 վեդրո ջուր, իսկ միւսը՝ 18 վեդրո: Սկզբում գործում էր միայն առաջին մեքենան, իսկ 9 ըուպէից յետոյ բաց արին նաև միւսը: Երկրորդ մեքենան բաց անելուց ո՞րքան ժամանակ յետոյ աւագանը կդատարկուի, եթէ նրա մէջ 663 վեդրո ջուր կայ:

183. Միմեանցից 145 վերստ հեռաւորութիւն ունե-

ցող երկու քաղաքներից կէս օրից յետոյ ժամը 3-ին դուրս եկան երկու գնացք և գնում էին իրար հակառակ ուղղութեամբ: Առաջին գնացքը իւրաքանչիւր ժամում անցնում էր 34 վերստ, իսկ երկրորդը՝ 46 վերստ: Գնացքները ո՞ր ժամին իրարից հեռու կը լինեն 465 վերստ:

184. 876 փութ հացահատիկ նաւից դատարկելու համար վարձեցին 7 բանւոր. աշխատանքն սկսելուց 3 ժամ յետոյ աւելացան նորից 6 մարդ: Քանի՞ ժամում դատարկեցին բոլոր հացահատիկը, եթէ յայտնի է, որ իւրաքանչիւր բանւոր փոխադրել է 12 փութ:

185. Մանրավաճառը իւրաքանչիւր 8 գրվ. մրգին 56 կոպ. վճարեց, իսկ ծախեց իւրաքանչիւր 9 գրուանքան 1 ըուբլի 8 կոպէկով: Ո՞րքան միրգ ծախեց մանրավաճառը, եթէ ստացաւ ընդամենը 1 ըուբլի 75 կոպէկ օգուտ:

186. Ջրամբարն ունի երկու խողովակ. առաջինով մի ըուպէում ներս է թափւում 41 վեդրո ջուր, իսկ երկրորդով նոյնքան ժամանակում դուրս է թափւում 28 վեդրո: Քանի՞ ըուպէից յետոյ կլցուի աւագանը, որ տանում է 728 վեդրո ջուր, եթէ ամբողջ ժամանակը երկու խողովակներն էլ բաց մնան:

187. Առևտրականը գնեց 82 արշին չիթ 9 ըուբ. 84 կոպ.: 28 արշինը նա տուեց իր ծանօթներից մէկին առքի գնով: Ո՞րքանով պէտք է նա ծախէ մնացած չիթը, որպէս զի 2 ըուբլի 16 կոպէկ օգուտ ստանայ:

XIV. Խ Ա Ռ Ն Ո Ւ Ր Դ.

188. Խառնուրդ կազմելու համար վերցրել են երեք տեսակ թէյ՝ 23 գրվ. 1 ըուբ. 40 կոպէկանոց, 18 գրվ.՝ 1 ըուբ. 60 կոպէկանոց եւ 19 գրվ.՝ 2 ըուբլիանոց գրուանքան: Այդ ամբողջ խառնուրդը ծախեցին եւ 15 ըուբ. օգուտ ստացան: Ո՞րքանով ծախեցին խառնուրդի գրուանքան:

Լ ՈՒ Ծ ՈՒ Մ.

ա. Որքան արժէ առաջին տեսակ թէյի 23 գրուանքան.

$$1 \text{ րուբ. } 40 \text{ կոպ.} \times 23 = 140 \text{ կոպ.} \times 23$$

$$\underline{420}$$

$$+ 280$$

$$3220 \text{ կոպ.} = 32 \text{ րուբ. } 20 \text{ կ.}$$

բ. Որքան արժէ երկրորդ տեսակ թէյի 18 գրուանքան.

$$1 \text{ րուբ. } 60 \text{ կոպ.} \times 18 = 160 \text{ կոպ.} \times 18$$

$$\underline{1280}$$

$$+ 160$$

$$2880 \text{ կոպ.} = 28 \text{ րուբ. } 80 \text{ կ.}$$

գ. Որքան արժէ երրորդ տեսակի թէյի 19 գրուանքան.

$$2 \text{ րուբ.} \times 19 = 38 \text{ րուբ.}$$

դ. Որքան է ամբողջ խառնուրդ թէյը.

$$23 \text{ գրվ.} + 18 \text{ գրվ.} + 19 \text{ գրվ.} = 60 \text{ գրվ.}$$

ե. Որքանով ծախեցին ամբողջ 60 գրուանքայ խառնուրդ թէյը.

$$32 \text{ րուբ. } 20 \text{ կոպ.}$$

$$28 \text{ » } 80 \text{ »}$$

$$38 \text{ » } \text{ » } \text{ »}$$

$$15 \text{ » } \text{ » } \text{ »}$$

$$\underline{114 \text{ րուբ. } 0 \text{ կոպ.}}$$

զ. Որքանով ծախեցին խառնուրդ թէյի մի գրուանքան.

$$114 \text{ րուբ.} : 60 = 1 \text{ ր. } 90 \text{ կոպ.}$$

$$\underline{- 60}$$

$$54 \text{ ր.} = 5400$$

$$\underline{- 540}$$

$$0$$

189. Պառնուրդ կազմելու համար վերցրել են 40 գրուանքայ լաւ տեսակի ալիւր, գրուանքան 6 կոպ., և 60 գրուանքայ հասարակ տեսակի ալիւր, գրուանքան 4 կոպ.: Ամբողջ խառնուրդը վաճառել են 20 կոպ. օգուտով: Որքանով են վաճառել խառնուրդի գրուանքան:

190. Գինեվաճառը խառնեց վեղրօն 7 րուբլիանոց 24 վեղրօ գինու հետ 5 վեղրօ ջուր: Որքան օգուտ կամ վնաս կստանայ, եթէ խառնուրդ գինու վեղրօն ծախէ 7 րուբլով:

191. Երկու տեսակ կովի իւղից 56 գրուանքայ խառնուրդ կազմեցին՝ գրուանքան 40 կոպ. արժողութեամբ. մէկի գրուանքան արժէր 37 կոպէկ, իսկ միւսինը՝ 45 կոպէկ: Քանի՞ գրուանքայ պէտք է վերցնել իւրաքանչիւր տեսակից այդ խառնուրդի համար:

Համեմատելով խառնելի իւղերի մի մի գրուանքայի արժէքը խառնուրդի մի գրուանքայի արժէքի հետ, կտեսնենք, որ 1-ին տեսակ իւղի իւրաքանչիւր գրուանքան վաճառելով խառնուրդի գնով, կստացուի իւրաքանչիւր գրուանքային 3 կոպէկ օգուտ. իսկ 2-րդ տեսակ իւղի իւրաքանչիւր գրուանքան վաճառելով խառնուրդի գնով, կստացուի 5 կոպէկ վնաս: Հետեւապէս, վնասը և օգուտը հաւասարեցնելու համար հարկաւոր է 1-ին տեսակի իւրաքանչիւր 5 գրվ. դիմաց 2-րդ տեսակից վերցնել 3 գրվ., կամ թէ չէ երկու տեսակն այնպէս խառնել, որ 1-ին տեսակի 5 մասին ընկնի 2-րդ տեսակի 3 մաս: Ուրեմն 56 գրուանքայ իւղը պէտք է բաժանել 8 մասի և այդպիսի մասերից վերցնել 5, ապա 3, որով կգանենք, որ 1-ին տեսակ իւղից խառնուրդի համար պէտք է վերցնել 35 գրվ., իսկ 2-րդ տեսակից՝ 21 գրվ.:

192. Քանի՞ գրուանքայ թէյ պէտք է վերցնել 2 րուբլիանոց և 5 րուբլիանոց, որպէս զի ստացուի զըրուանքան 3 րուբլիանոց 27 գրուանքայ խառնուրդ:

193. Պանութում խառնուրդ կազմելու համար վերցրին գրուանքան 5 րուբլիանոց 38 գրվ. թէյ և մի քանի գրուանքայ էլ 3 րուբլիանոց. ամբողջ խառնուրդը ծախեցին 370 րուբ. և ստացան 30 րուբ. վնաս: Քանի՞ գրվ. թէյ է գործածուել երկրորդ տեսակից խառնուրդի համար:

194. Որքան պէտք է խառնել գրուանքան 20 կոպէկանոց ընկոյզից, գրուանքան 13 կոպէկանոց 24 գրվ. ընկոյզի հետ, որպէս զի կարելի լինի խառնուրդը ծախել առանց օգուտի և վնասի՝ գրուանքան 15 կոպէկով:

195. 2 գրուանքայ 80 յարգի արծաթը ձուլել են 8 գրվ. 70 յարգի արծաթի հետ: Չուլուածքն ի՞նչ յարգի է դուրս եկել:

Յարգ կոչուում է մի գրուանքայ ձուլուածքի մէջ եղած մաքուր ոսկու կամ արծաթի մսխալների թիւը: Այսպէս, օրինակ, եթէ ասում են, որ մատանին շինուած է 56 յարգի արծաթից, այդ նշանակում է, որ այդ ձուլուածքի իւրաքանչիւր գրուանքայի (96 մսխալի) մէջ 56 մսխալ մաքուր արծաթ կայ և 40 մսխալ պլինձ կամ որևէ այլ խառնուրդ: Նոյնը պէտք է նկատի ունենալ նաև գօլեաներով հաշուելիս:

Նախ պէտք է իմանալ մաքուր արծաթի մսխալների քանակը առաջին կտորի, այն է 2 գրուանքայի մէջ, յետոյ երկրորդ կտորի, այն է 8 գրուանքայի մէջ և, վերջապէս, ամբողջ ձուլուածքի մէջ: Վերջը պէտք է իմանալ ամբողջ ձուլուածքի կամ խառնուրդի գրուանքաների թիւը, որից յետոյ արդէն՝ ունենալով պատրաստի ամբողջ ձուլուածքի մէջ եղած մաքուր արծաթի մսխալների թիւը և ամբողջ ձուլուածքի գրուանքաների թիւը, դժուար չի լինի իմանալ յարգը, այսինքն խառնուրդի իւրաքանչիւր գրուանքի մէջ եղած մաքուր ոսկու կամ արծաթի մսխալների թիւը:

$$[(80 \text{ մսխ.} \times 2) + (70 \text{ մսխ.} \times 8)] : (5 \text{ գրվ.} + 8 \text{ գրվ.}) = 72 \text{ մսխալ մաքուր արծաթ, կամ } 72 \text{ յարգի:}$$

196. Միասին ձուլեցին 2 գրվ. 70 յարգի, 5 գրուանքայ 56 յարգի և 8 գրվ. 90 յարգի երեք կտոր արծաթ: Ի՞նչ յարգի ձուլուածք ստացուեց:

197. 10 գրվ. 84 յարգի ոսկի ձուլեցին 4 գրվ. պղնձի հետ: Ի՞նչ յարգի ձուլուածք ստացուեց:

198. Արծաթագործը վերցրեց 90 յարգի մի արծաթէ շաքարաման, 72 յարգի մի մատուցարան և ձուլեց ու ստացաւ 84 յարգի 4 գրվ. 12 լոտ արծաթ: Ո՞րքան է իւրաքանչիւրի քաշն առանձին:

199. Վարպետը ձուլեց 84 յարգի 5 գրուանքայ արծաթը և 7 գրուանքայ հասարակ արծաթը միասին: Ստացուեց 70 յարգի ձուլուածք: Ի՞նչ յարգի էր երկրորդ ձուլուածքը:

Ամբողջ ձուլուածքի մէջ եղած մաքուր արծաթի և առաջին կտորի մէջ եղած մաքուր արծաթի տարբերութիւնը, այսինքն 70 մսխ. $\times (5+7) - (84 \text{ մսխ.} \times 5) = 420$ մսխ. ցոյց է տալիս, թէ որքան մաքուր արծաթ կայ երկրորդ կտորի մէջ: Բաժանելով մաքուր արծաթի մսխալների թիւը՝ 420 մսխալը 2-րդ կտորի գրուանքաների թուի՝ 7-ի վրայ, կգանենք 2-րդ կտորի յարգը, որ է 60:

XV. Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն .

200. Վաճառականը գնեց միեւնոյն արժէքն ունեցող երկու թոփ մետաքսէ կտոր. առաջինը՝ 58 արշին, իսկ երկրորդը՝ 42 արշին: Առաջինին վճարեց 32 ռուբլի աւելի, քան երկրորդին: Ո՞րքան վճարեց վաճառականը իւրաքանչիւր թոփին:

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ . *)

ա. Վաճառականը առաջին թոփին 32 ռուբլի աւելի վճարեց քանի՞ արշին մետաքսի համար:
58 արշ. մ. — 42 արշ. մ. = 16 արշ. մ.

բ. Ո՞րքան արժէ մի արշին մետաքսէ կտորը:
32 ռուբ. : 16 = 2 ռուբ.

գ. Ո՞րքան արժէ մետաքսէ կտորի առաջին թոփը.
2 ռուբ. $\times 58 = 116$ ռուբ.

դ. Ո՞րքան արժէ մետաքսէ կտորի երկրորդ թոփը.
2 ռուբ. $\times 42 = 84$ ռուբ.

201. Պղնձագործը գործածեց ինքնաեռներ պատրաստելու համար 450 գրվ. պղինձ, իսկ կաթսաների համար՝ 630 գրվ.: Քանի՞ ինքնաեռ և կաթսայ պատրաստեց պղղնձագործը, եթէ կաթսաների թիւը 18-ով աւելի դուրս եկաւ, քան ինքնաեռների թիւը, թէպէտ կաթսաների և ինքնաեռների քաշը հաւասար դուրս եկաւ:

202. Մի թոփ մահուդին վաճառականը պահանջում է 875 ռուբ.: Եթէ այդ թոփից առաջուց կտրած չլինէին 17 արշին, այն ժամանակ վաճառականը կպահանջէր 994 ռուբ.: Քանի՞ արշ. մահուդ կար ամբողջ թոփի մէջ:

203. Եթէ ես գնեմ 25 գիրք, ինձ մօտ կմնայ 45 կոպ.: Իսկ եթէ գնեմ նոյնպիսի 28 գիրք, կծախսեմ իմ ունեցած ամբողջ փողը: Ո՞րքան ես փող ունեմ:

*) Նախքան հարցերին անցնելը պէտք է հարց տալ, թէ ինչո՞ւ վաճառականը առաջին թոփին 32 ռուբլի աւելի վճարեց, քան երկրորդին:

204. Գնած է 25 փութ շաքար եւ 15 գրուանքայ թէյը 180 ըուրլով. մի ուրիշ անգամ միեւնոյն գնով գնած է 45 գրվ. թէյը եւ 25 գրվ. շաքարը 240 ըուրլով: Ո՞րքան արժէ թէյի մի գրուարան եւ շաքարի մի փութը:

Համեմատելով առաջին անգամ գնած ապրանքի քանակը եւ նրա արժէքը երկրորդի հետ, կտեսնենք, որ մի տեսակ ապրանքը, այն է՝ շաքարը երկու դէպքում հաւասար է (25 գրուանքայի), տարրեր է թէյի քանակը. առաջին դէպքում 15 գրուանքայ, երկրորդ դէպքում՝ 45 գրուանքայ. և սրովհետեւ երկրորդ դէպքում թէյի քանակն աւելի է, այդ պատճառով և աւելի է վըճարած: Ուրեմն աւելի փողը (240 ը.—180 ը.=60 ը.) աւելի թէյի (45 գրվ. թ.—15 գրվ. թ.=30 գրվ. թ.) գինն է: Գտնելով աւելի թէյի քանակը (30 գրվ.) և նրա գինը (60 ըուր.), կարող ենք գտնել նախ մի գրուանքայ թէյի արժէքը (60 ը.:30=2 ը.) և ապա շաքարի մի փութի գինը:

205. Հինգ դիւժին աթոռի և 1 բազմոցի համար վըճարեցին 272 ըուր., իսկ 2 դիւժին նոյնպիսի աթոռների և նոյնպիսի մի բազմոցի համար՝ 140 ըուր.: Ո՞րքան վճարեցին մի դիւժին աթոռի և ո՞րքան մի բազմոցի համար:

206. Առևտրականը վաճառեց մէկին 39 գրուանքայ թէյ և 12 փութ շաքար 213 ըուրլով, իսկ միւսին միեւնոյն գնով 27 գրվ. թէյ և նոյնպէս 12 փութ շաքար՝ 177 ըուր.: Ո՞րքան արժէք մի գրվ. թէյը և ո՞րքան մի փութ շաքարը:

207. Գնած է առաջին անգամ՝ 15 արշին սեւ մահուղ եւ 12 արշ. թափշ ու ամբողջին վճարած է 225 ըուրլի. մի այլ անգամ՝ միեւնոյն գնով գնած է միայն մի մի արշին ինչպէս մէկ, նոյնպէս եւ միւս կտորից եւ վճարած է որս համար 17 ըուրլի: Ո՞րքան արժէ մահուղի եւ ո՞րքան թափշի մի արշինը:

Այս և նման խնդիրներում հարկաւոր է հաւասարեցնել գնած ապրանքների մի մի տեսակը, որպէս զի ապրքեր լինեն միմիայն մի տեսակ ապրանքի քանակը և նրանց գինը: Այսպէս, օրինակ, եթէ 1 արշին մահուղը և 1 արշին թափշը արժէ 17 ըուրլի, ապա ուրեմն (եթէ հաւասարեցնելու լինենք մահուղների քանակը) 15 անգամ աւելի մահուղը և թափշը, այսինքն 15 ար-

շին մահուղը և 15 արշին թափշը կարժենայ 15 անգամ 17 ըուրլի, այսինքն 255 ըուրլի: Համեմատելով մեծացրած երկրորդ առևտուրը (15 արշ. մահ. և 15 արշ. թափշը, որ արժէ 255 ըուր.) առաջինի (15 արշ. մ. և 12 արշ. թ., որ արժէ 225 ըուր.) հետ, կտեսնենք, որ 3 արշին թափշը արժէ 30 ըուրլի: Սրանից յետոյ արդէն լուծու՞մը շարունակելը դժուար չէ:

208. Մի գիւղացի վաճառեց մի տեղ 9 հաւը և 28 ճուտը 7 ըուր. 35 կոպէկով, իսկ մի այլ տեղ միեւնոյն գնե-րով 4 հաւը և 7 ճուտը՝ 2 ը. 45 կոպ.: Ո՞րքան վճարեց գիւղացին մի ճուտի համար:

209. Առևտրականը, կամենալով փոխել մահուղը 4 ըուրլիանոց թէյի հետ, առաջարկեց մի քանի արշին մահուղ, արշինը 5 ըուր. և 120 ըուրլի փող կամ նոյնքան մահուղ, արշինը 8 ըուր. առանց որևէ գումարի. Քանի՞ գրուանքայ թէյ էր կամենում վերցնել առևտրա-կանը և քանի՞ արշին մահուղ էր առաջարկում թէյի փո-խարէն:

210. Կալուածատէրը պարտքը վճարելու համար առաջարկում էր մի քանի դեսեատին անտառ, դեսեատինը 130 ըուր. և 200 ըուր. փող, կամ նոյնքան դեսեատին վարելանոց, դեսեատինը 70 ըուր. և 500 ըուր. փող: Ո՞րքան էր կալուածատիրոջ պարտքը:

211. Ալրավաճառը հաշուեց, որ եթէ ինքը գնէ 46 տուրակ ալիւր, փողը կպակասի 130 ըուր., բայց եթէ գնէ 16 տուրակ նոյնպիսի ալիւր, իրեն մօտ կմնայ 230 ըուր.: Ո՞րքան արժէ մի տուրակ ալիւրը և ո՞րքան փող ունէր ալրավաճառը:

212. Գործարանատէրն հաշուել է, որ եթէ ինքը վաճառէ մետաքսէ կտորի իւրաքանչիւր թոփը 55 ըուրլով, կստանայ 74 ըուրլի վնաս, իսկ եթէ վաճառէ թոփը 63 ըուրլով, 46 ըուրլի օգուտ կունենայ: Քանի՞ թոփ մետաքսէ կտոր ունէր գործարանատէրը վաճառելու համար և ո՞րքան էր նստել իրեն վրայ այդ կտորը

XVI. ԵՆԹԱԴՐՈՒԹԻՒՆ.

213. Մի շինութիւն կանգնեցնելու համար վարձեցին հիւաներ եւ որմնադիրներ, ընդամենը 32 մարդ: Խրաքանչիւր հիւան շաքաթական ստանալու էր 8 ռուբլի, իսկ իւրաքանչիւր որմնադիր՝ 5 ռուբլի: Քանի՞ հիւան եւ քանի՞ որմնադիր էր վարձած, եթէ երեք շաքաթուայ աշխատանքի համար նրանք քոյրըն ստացան 642 ռուբլի:

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ.

ա. Ո՞րքան փող կստանային 32 մարդը մի շաքաթում, եթէ ենթադրենք, որ ամեն մի որմնադիրի մի շաքաթուայ աշխատավարձը հաւասար է հիւանի մի շաքաթուայ աշխատավարձին.

8 ռուբ. × 32 = 256 ռուբ.

բ. Ո՞րքան փող կստանային 32 մարդը երեք շաքաթում միասին, եթէ աշխատավարձը հաւասար լինէր.

256 ռուբ. × 3 = 768 ռուբ.

գ. Քանի՞ ռուբլի աւելի կստանային էրեք շաքաթուայ աշխատանքի համար՝ աշխատավարձի հաւասար լինելու դէպքում.

768 ռուբ. - 642 ռուբ. = 126 ռուբ.

դ. Քանի՞ ռուբլի աւելի հաշուեցինք իւրաքանչիւր որմնադիրի մի շաքաթուայ աշխատավարձը.

8 ռուբ. - 5 ռուբ. = 3 ռուբ.

ե. Քանի՞ ռուբլի աւելի հաշուեցինք իւրաքանչիւր որմնադիրի երեք շաքաթուայ աշխատավարձը.

3 ռուբ. × 3 = 9 ռուբ.

զ. Քանի՞ որմնադիրը 126 ռուբլի աւելի կստանար երեք շաքաթում, եթէ 9 ռուբլի աւելին կստանայ երեք շաքաթում մի որմնադիրը:

126 ռուբ. : 9 ռուբ. = 14 (որմնադիր)

— 4
36
— 36
0

է. Քանի՞ հիւան էր վարձած.

32 մ. - 14 մ. = 18 (հիւան)

214. Վաճառեցին շոգենաւի առաջին և երկրորդ կարգի 50 տոմս 260 ռուբլով: Առաջին կարգի տոմսն արժէր 6 ռուբլի, իսկ երկրորդ կարգինը՝ 4 ռուբ.: Քանի՞ տոմս է վաճառուած իւրաքանչիւր տեսակից:

215. Բարեգործական ընկերութիւնը 11 նուիրատուներից, որոնց մէջ կային թէ տղամարդիկ և թէ կանայք, ստացաւ 1000 ռուբլի՝ դպրոց շինելու համար. իւրաքանչիւր տղամարդ նուիրեց 140 ռուբ., իսկ իւրաքանչիւր կին՝ 50 ռուբ.: Քանի՞ն էին տղամարդ և քանի՞սը՝ կին:

216. Հայրը որդուն սոււեց 1 ռ. 42 կոպէկի 3 և 5 կոպէկանոց 36 պղնձէղրամ: Ո՞րքան ստացաւ որդին իւրաքանչիւր տեսակ պղնձէղրամից:

217. Ոստնած է գրուանքան 16 կոպ. և 25 կոպ. 2 տեսակի 38գրվ. ընկոյգ: Ամբողջ խառնուրդը ծախուել է առանց օգուտի և ֆաստի 7 ռուբ. 43 կոպ.: Քանի՞ գրուանքայ ընկոյգ էր վերցրած իւրաքանչիւր տեսակից:

218. Վաճառականն ունէր 90 արշին 2 թոփ կտաւ. մի թոփ կտաւի արշինն արժէ 12 կոպ., իսկ միւսինը՝ 9 կոպ.: Վաճառելով ամբողջ կտաւը 10 ռուբլով, նա 70 կոպ. օգուտ ստացաւ: Քանի՞ արշին էր իւրաքանչիւր թոփ կտաւը:

219. Թէյավաճառն ունէր մի արկղ երեք ռուբլիանոց և մի արկղ հինգ ռուբլիանոց թէյ. երկու արկղը քաշում էր մէկկէս փութ: Երբ վաճառեց ամբողջ երկու արկղի թէյը 5-ական ռուբլով գրուանքան, ստացաւ 45 ռուբլի օգուտ: Քանի՞ գրուանքայ թէյ կար իւրաքանչիւր արկղի մէջ:

220. Շուկայ բերին 100 հնդուհաւ և սագ. իւրաքանչիւր հնդուհաւ արժէր 1 ռուբ. 10 կոպ., իսկ իւրաքանչիւր

չիւր սագ՝ 80 կոպ.։ Երբ բոլոր թռչունների հատը վաճառեցին 85 կոպ., 14 րուբ. 50 կոպ. փաս ստացան։ Իւրաքանչիւր տեսակից քանի՞ թռչուն շուկայ էր բերուած։

XVII. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ.

221. Վարձուեց մի մշակ այն պայմանով, որ իւրաքանչիւր աշխատած օրուայ համար ստանայ 70 կոպ., իսկ իւրաքանչիւր չաշխատած օրուայ համար ինքը վճարէ գործատիրոջը 25 կոպէկ։ Երկու շաբաթից յետոյ մշակն ստացաւ 5 րուբ. 55 կոպ.։ Բանի՞ օր նա աշխատեց։

Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ.

ա. Ո՞րքան փող կստանար մշակը, եթէ երկու շաբաթուայ բոլոր օրերն էլ աշխատէր.

$$\frac{70 \text{ կոպ.} \times 12}{840 \text{ կոպ.}} = 8 \text{ ր. } 40 \text{ կոպ.}$$

բ. Ո՞րքան փողից նա զրկուում էր բոլոր չաշխատած օրերի համար.

$$\begin{aligned} & 8 \text{ ր. } 40 \text{ կոպ.} \\ & - 5 \text{ ր. } 55 \text{ ր.} \\ & \hline & 2 \text{ ր. } 84 \text{ կոպ.} \end{aligned}$$

գ. Ո՞րքան փողից նա զրկուում էր իւրաքանչիւր չաշխատած օրուայ համար.

$$70 \text{ կոպ.} + 25 \text{ կ.} = 95 \text{ կոպ.}$$

դ. Քանի՞ օր նա չի աշխատել.

$$\begin{aligned} 2 \text{ ր. } 85 \text{ կոպ.} : 85 \text{ կոպ.} &= 285 \text{ կոպ.} : 95 \text{ կոպ.} = 3 \text{ (օր)} \\ & - \frac{285}{95} \\ & \hline & 3 \end{aligned}$$

ե. Քանի՞ օր էր նա աշխատել.

$$12 \text{ օր} - 3 \text{ օր} = 9 \text{ օր.}$$

222. Հայրն առաջարկեց որդուն վճարել 16 խնդիր և խոստացաւ իւրաքանչիւր ճիշտ վճարած խնդրի համար տալ

նրան 15 կոպ., իսկ իւրաքանչիւր սխալ վճարած խնդրի համար նրանից վերցրել 10-ական կոպէկ։ Ո՞րքան փող տուեց հայրը որդուն, եթէ վերջինս չի լուծել 7 խնդիր։

223. 100 հայելի փոխադրելու համար մի կառք վարձեցին այն պայմանով, որ իւրաքանչիւր անփաս տեղ հասցրած հայելու համար վճարեն կառապանին 85 կոպ., իսկ իւրաքանչիւր կտորուած հայելու փոխարէն ստանան նրանից 1 րուբ. 65 կոպ.։ Քանի՞ հայելի անփաս տեղ էր հասցրել կառապանը, եթէ հաշիւ տեսնելուց յետոյ ստացաւ 65 րուբլի։

224. Գրագիրն յանձն առաւ արտագրել մի գիրք այն պայմանով, որ իւրաքանչիւր աշխատած օրուայ համար ստանայ 3 րուբ., իսկ չաշխատած օրուայ համար ինքը վճարէ 2 րուբ.։ Քանի՞ օր էր նա աշխատել, եթէ 28 օր անցնելուց յետոյ նրան վճարեցին միայն 39 րուբլի։

XVIII. Բ. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ.

225. Եթէ մանրավաճառը իր ունեցած քոյրը նարինջները վաճառէ հատը 7 կոպէկով, 45 կոպէկ օգուտ կստանայ, իսկ եթէ վաճառէ հատը 9 կոպ., այն ժամանակ 1 րուբլի 35 կոպ. օգուտ կունենայ։ Բանի՞ նարինջ ունէր մանրավաճառը։

Համեմատելով առաջին օգուտը երկրորդի հետ, կ'տեսնենք, որ երկրորդ օգուտը առաջինից աւելի է 90 կոպէկով։ Բայց որովհետեւ երկրորդ օգուտի իւրաքանչիւր նարինջի գինը աւելի է առաջինի իւրաքանչիւր նարինջի գնից 2 կոպէկ, ապա ուրեմն 90 կոպէկ աւելի օգուտ ստանալու համար հարկաւոր է վաճառել այնքան նարինջ, որքան անգամ 2 կոպէկը պարունակուում է 90 կոպէկի մէջ, (90 կոպէկ : 2 կոպէկ = 45 (նարինջ))։

226. Արշինը 15 կոպէկով մի քանի արշին չիթ գնելուց յետոյ գիւղացու ժող մնաց ընդամենը 42 կոպ.։ Բայց եթի նա չիթի արշինը գնէր 18 կոպ., այն ժամանակ կը ծախսէր իր ունեցած ամբողջ փողը։ Քանի՞ արշին չիթ գնեց գիւղացին։

227. Առևտրականը ծախեց մի քանի գրուանքայ ընկոյզ, գրուանքան 25 կոպ. և ստացաւ 36 կոպ. օգուտ: Բայց եթէ նա իւրաքանչիւր գրուանքան գնէր 21 կոպ., այն ժամանակ այդ վաճառքից նա ոչ վնաս և ոչ օգուտ կստանար: Քանի՞ գրուանքայ ընկոյզ է վաճառած:

228. Դասարան մտնելով ուսուցիչը հաշուեց, որ եթէ իւրաքանչիւր աշակերտի բաժանէ 9-ական թերթ թուղթ, կպակասի 27 թերթ, իսկ եթէ բաժանէ իւրաքանչիւրին 7 թերթ, իր մօտ կը մնայ 49 թերթ թուղթ: Ո՞րքան է դասարանի աշակերտների թիւը:

229. Իմ ունեցած բոլոր փողերով ես կարող եմ գնել կամ 45 արշին մահուդ, կամ 30 արշ. թաւիշ. վերջինի մի արշինը 3 ըուբլով աւելի արժէ, քան մահուդի մի արշինը: Ո՞րքան փող ունեմ ես:

Կ Ի Կ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն .

230. Սառնած է 37 գրուանքայ՝ գրուանքան 9 կոպէկանոց ալիւրը 25 գրուանքայ՝ գրուանքան 12 կոպէկանոց ալիւրի հետ: Ո՞րքանով պէտք է ծախել խառնուրդի իւրաքանչիւր գրուանքան, որպէս զի ամբողջ խառնուրդի մէջ 49 կոպ. օգուտ ստացուի:

231. 4 դիւժին սեղանի և 5 դիւժին թէյի գդալներին վճարած է 180 ըւբլի. միւս անգամ 4 դիւժ. սեղանի և 5 դիւժ. թէյի գդալներին վճարած է 204 ըուբլի: Ո՞րքան արժէ մի սեղանի և ո՞րքան մի թէյի գդալը:

232. Մի կտոր չիթն արժէ 9 ըուբ. 54 կոպ., եթէ որ կտորը 15 արշին պակաս լինէր, այն ժամանակ նա կարժեհար 6 ըուբ. 84 կոպ.: Ո՞րքան արժէր չիթ արշինը:

233. Մանրավաճառը գամբիւղի մէջ հաւասար թուով կիտրոններ և նարինջներ ունի: Կիտրոնների հատը նա վաճառում է 5 կոպ., իսկ նարինջների հատը՝ 9 կոպէկով: Ծախելով բոլոր կիտրոններն ու նարինջները, մանրավաճառը տեսաւ, որ նարինջների համար 1 ըուբ. 48 կոպ. աւելի է ստացել, քան կիտրոնների համար: Ո՞րքան էր իւրաքանչիւրից:

234. Վաճառականը 18 փութ շաքարը և 45 գրուանքայ թէյը ծախեց 198 ըուբլով: Գնողի վրայ թէյի գրուանքան նստեց երեք անգամ աւելի աժան, քան մի փութ շաքարը: Ի՞նչ գնով էր ծախում վաճառականը թէյի մի գրուանքան և շաքարի մի փութը:

235. 24 արշին սև մահուդի և 45 արշին կապոյտ մահուդի համար առևտրականը պահանջում է 303 ըուբլի: 1 արշին սև և 1 արշին կապոյտ մահուդը նա գնահատում է 10 ըուբլի: Ի՞նչ գնով է առևտրականը վաճառում իւրաքանչիւր տեսակ մահուդի արշինը:

236. Առևտրականը կամենում էր ձմերուկները վաճառել՝ հատը 30 կոպէկով, բայց 8 ձմերուկը վայր ընկան և շարդուեցին. որպէս զի վնասը ծածկի, առևտրականը որոշեց մնացած ձմերուկները վաճառել հատը 36 կոպէկով: Քանի՞ ձմերուկ ունէր առևտրականը:

237. Վարպետը աշխատեց գործատիրոջ մօտ 73 օր և ստացաւ 155 ըուբլի: Քանի՞ օր նա աշխատեց, եթէ իւրաքանչիւր աշխատած օրուայ համար ստանում էր 3 ըուբլի, իսկ իւրաքանչիւր չաշխատած օրուայ համար ինքը պարտաւոր էր վճարել գործատիրոջը 1 ըուբլի:

238. Ուսուցիչը մտաւ գրավաճառանոց, որ իր ունեցած փողով գնէ կամ 24 Մայրենի լեզու, կամ 42 խնդրագիրք-վերջինիս իւրաքանչիւր օրինակը 15 կոպէկով աժան էր մայրենի լեզուից: Ո՞րքան փող ունէր ուսուցիչը:

239. Ժամագործն ունէր մի քանի արծաթէ ժամացոյց: Եթէ իւրաքանչիւր ժամացոյցը վաճառէ 12 ըուբլու՝ 20 ըուբլի կվնասուի, իսկ եթէ վաճառէ 15-ական ըուբլով՝ 40 ըուբլի օգուտ կանէ: Քանի՞ ժամացոյց ունէր ժամագործը և բոլորը քանի՞ ըուբլի արժէր:

240. Առևտրականը մի գնողի ծախեց 4 փութ շաքար և 23 գրուանքայ թէյ, իսկ միւսին՝ 12 փութ շաքար և 27 գրուանքայ թէյ: Առաջին գնողից նա ստացաւ 70 ըուբլի, իսկ երկրորդից՝ 126 ըուբլի: Ո՞րքանով ծախեց առևտրականը շաքարի փութը և թէյի գրուանքան:

241. Գրուանքան 8 կոպէկանոց և 14 կոպէկանոց երկու տեսակ բրինձից պէտք է կազմել 18 գրուանքայ խառնուրդ՝ գրուանքան 10 կոպէկանոց: Ո՞րքան պէտք է վերցնել իւրաքանչիւր տեսակից:

242. Երկու գրուանքայ 80 յարգի արծաթը ձուլած է 8 գրուանքայ 70 յարգի արծաթի հետ: Ի՞նչ յարգի դուրս եկաւ ձուլուածքը:

243. 10 գրուանքայ 84 յարգի ոսկին ձուլւցին 4 գրուանքայ պղնձի հետ: Ի՞նչ յարգի ձուլուածք ստացուեց:

Բ Ա Ր Դ Ա Ն Ո Ւ Ա Ն Ա Կ Ա Ն Թ Ո Ւ Ե Ր .

Այն թիւը, որ ստացուում է առարկաներ համադրելուց կամ չափելուց, կոչւում է անուանական: Օրինակ 5 մարդ, 18 փութ, 8 սաժէն և այլն:

Այն թիւը, որ կազմուած է անուն չունեցող միւլթիւններից կամ միուլթեան մասերից, կոչւում է վերացական. օրինակ 28, 425, $\frac{1}{4}$ և այլն:

Անուանական թուերը լինում են պարզ և բարդ:

Պարզ անուանական թիւ են, օրինակ՝ 12 արշինը, 24 օրը, 12 վեդրօն և այլն:

Բարդ անուանական թիւ են, օրինակ՝ 5 փութ 4 գլուանք, 2 տարի 4 ամիսը և այլն:

Վ Ե Ր Ա Շ Ո Ւ Մ Ե Ի Ա Ն Դ Ր Ա Դ Ա Ր Ձ Ո Ւ Մ .

Բ Ա Ն Ա Ի Ո Ր .

244. Քանի՞ սաժէն է՝ $1\frac{2}{5}$ վ., $1\frac{4}{5}$ վ., $1\frac{1}{10}$ վ., $1\frac{3}{10}$ վ., $1\frac{7}{10}$ վ., $1\frac{9}{10}$ վ., $1\frac{1}{4}$ վերստը, 1 վ. 20 սաժ. 1 վ. 257 սաժէնը:

245. Քանի՞ արշին է՝ 160 սաժ., 135 սաժ., 128 սաժ., 2 արշ., $\frac{2}{5}$ վ., $\frac{3}{5}$ վ., $\frac{3}{4}$ վ., $\frac{1}{10}$ վերստը:

246. Քանի՞ ոտնաչափ է՝ 80, 65, 75, 120 սաժէնը. 46 սաժ. 5 ոտն., 58 սաժ. 4 ոտն., 39 սաժ. 6 ոտն., 88 սաժէն 3 ոտնաչափը:

247. Քանի՞ արշին է՝ 3, 5, 10, 11 սաժէնը, 2 սաժ. 2 արշ., 4 սաժ. 1 արշ., 3 սաժ. 1 արշինը.

248. Քանի՞ վերշոկ է՝ 10 արշ., 12 արշ., 15 արշ., 8 սաժ. 1 արշ., 10 սաժ., 13 սաժ. 1 արշ., 20 սաժէնը:

249. Քանի՞ գրուանքայ է՝ 4, 7, 9, 12, 15, 17, 19 փութը. 6 փ. 27 գրվ., $8\frac{3}{4}$ փութը, $11\frac{3}{5}$ փութը:

250. Քանի՞ լօտ է՝ 3, 5, 6, 8, 13, 25, 30, $20\frac{1}{2}$ գրուանքան:

251. Քանի՞ մսխալ է՝ 2, 3, 5, 8, $10\frac{1}{2}$, $5\frac{3}{8}$ գրվ., 7 գրվ. 8 լօտը, 4 գրվ. 2 մսխալը:

252. Քանի՞ ժամ է՝ 6, 9, 11, 15 և 20 օրը, 2, 3, 5 շաբաթը, 2 շաբ. 5 օրը, 4 շաբ. 2 օրը:

253. Քանի՞ ըրպէ է՝ 6, 8, 7, 9, $10\frac{1}{2}$, $15\frac{3}{4}$ ժամը:

254. Քանի՞ օր է՝ 2 նահանջ տարին, 2 հասարակ տարին և 125 օրը, 2 նահանջ տարին և 16 շաբաթը:

255. Քանի՞ հինգ կոպէկանոց է՝ 6, 7, 9, 11, 14, 20, 25, 36 ըուրլին:

256. Քանի՞ տասնհինգ կոպէկանոց է՝ 9, 12, 15, 18, 21, 24, 36, 48 ըուրլին:

257. Քանի՞ փութ և գրուանքայ է՝ 126 գրվ., 285 գրվ., 364 գրվ., 488 գրուանքան:

258. Քանի՞ գրուանքայ է՝ 128, 160, 354, 384, 992 լօտը:

259. Քանի՞ օր և ժամ է՝ 180, 300, 420, 720, 840 ժամը:

260. Քանի՞ ժամ և ըրպէ է՝ 360, 500, 680, 960 ըրպէն:

261. Քանի՞ օգմա և դաստայ է՝ 486, 500, 800, 960 և 1000 թերթը:

262. Քանի՞ գրուանքայ և լօտ է՝ 384, 640, 800, 960 լօտը:

263. Քանի՞ լօտ է՝ 384, 288, 480 և 672 մսխալը:

264. Քանի՞ սաժէն և արշին է 138,168,195,267,246, 342, 410, 430, 576 արշինը:

265. Քանի՞ անգամ վերստն աւելի է 25 սաժէնից, 6 ըուբլին աւելի է 75 կոպէկից, 7 փութը շատ է 14 գրուանքայից:

266. Ո՞րքան է 170 ըուբ. 60 կոպէկի, 131 փութ 18 գրուանքայի կէսը. 76 գրուանքայ 16 լտաի երրորդ մասը. 239 փութ 12 գրուանքայի չորրորդ մասը:

Վ Ե Ր Ա Ն Ե Լ

Գ Ր Ա Ի Ո Ր

- 267. 8 ըուբ. 5 կոպ., 19 ըուբ. 60 կոպ.—կոպէկներէ:
- 268. 9 փութ 14 գրվ.—գրուանքաների:
- 269. 31 լոտ 2 մսխ.—մսխալների:
- 270. 124 սաժ. 2 արշ.—արշինների:
- 271. 27 սաժ. 6 ոտն.—ոտնաչափերի:
- 272. 8 վեգրո 7 շտոֆը—շտոֆների:
- 273. 9 օր 16 ժամը—ժամերի:
- 274. 18 մղոն 3 վերստը—վերստերի:
- 275. 15 փութ 24 գրվ.—գրուանքաների:
- 276. 16 ոտն. 4 մատն.—մատնաչափերի:
- 277. 8 գրվ. 2 լոտը—մսխալների:
- 278. 52 մղոնը—վերստերի:
- 279. 14 տակաւ 15 վեգրոն—վեգրոների:
- 280. 1 օգմայ 15 դաստայ 8 թերթը—թերթերի:
- 281. 5 շաբ. 4 օր 17 ժամը—ժամերի:
- 282. 1 տարի 6 շաբ. 5 օրը—օրերի:
- 283. 15 տարի 8 ամիսը—ամիսների:
- 284. 4 սաժ. 2 արշ. 7 վերլ.—վերլոկների:
- 285. 2 վեգրո 9 շտոֆը—շտոֆների:
- 286. 2 օգմայ 3 դաստայ 12 թերթը—թերթերի:

Ա Ն Դ Ր Ա Գ Ա Ր Ա Ն Ե Լ

- 287. 400,700,560,890, 965 կոպէկը —տասկոպէկանոց-ի:
- 288. 500,300,600,920, 875 կոպէկը —ըուբլիների:
- 289. 120,360,720,960,1000 ամիսը —տարիների:
- 290. 300,240,810,963, 722 արշինը —սաժէնների:
- 291. 160,480,640,960, 700 վերլոկը —սաժէնների:
- 292. 120,360,600,684, 720 մատնաչ. —ոտնաչափերի:
- 293. 140,385,840,780, 567 ոտնաչափը—սաժէնների.
- 294. 280,480,720,840, 930 վեգրոն —տակաւների.
- 295. 357,567,826,910,1000 օրը —շաբաթների.
- 296. 240,540,660,840, 940 ըուբէն —ժամերի.
- 297. 220,460,580,780, 905 դաստան —օգմաների.
- 298. 240,480,960,480, 800 թերթը —դաստաների.
- 299. 960,480,288,576, 700 մսխալը —գրուանքաների.
- 300. 260,390,480,570, 980 շտոֆը —վեգրոների.
- 301. 560,840,707,910, 960 վերստը —մղոնների.
- 302. 745 մսխալը—գրուանքաների և մսխալների.
- 303. 15 շաբաթը և 120 ժամը—շաբաթների և օրերի.
- 304. 35 ժամ 120 ըուբէն—օրերի և ժամերի.
- 305. 50 սաժէն 2 արշին 64 վերլ.—սաժէնների.
- 306. 1000 վեգրոն—տակաւների և վեգրոների:

Ա Ն Ո Ւ Ա Ն Ա Կ Ա Ն Թ Ո Ւ Ե Ր Ի Գ Ո Ւ Մ Ա Ր Ո Ւ Մ.

Բարդ անուանական թուերը գումարելու համար հարկաւոր է միմեանց տակ գրել այնպէս, որ միատեսակ անուանական թուերը գան իրար տակ: Վերջին գումարելու տակ գիծ պէտք է բաշել, իսկ ձախ կողմում գումարման նշան դնել: Այսպէս, օրինակ. 8 փութ 23 գրվ.
+ 5 » 18 »

Գումարումը սկսել պէտք է աջ կողմից, մանր չափերից և հետգհետէ անցնել դէպի ձախ՝ գումարելու մեծ

չափերը և, որտեղ հնարաւոր է, անդրադարձում կատարել: Անդրադարձումը պէտք է կատարել մտքում:

8 փութ 23 գրվ.
+5 » 18 »

13 փութ 41 գր. (գումարը մինչև անդրադարձում):
14 փութ 1 գր. (գումարը անդրադարձումից յետոյ):

- 307. 137 ըուբ. 26 կոպ. + 462 ըուբ. 24 կոպէկ:
- 308. 258 ըուբ. 17 կոպ. + 42 ըուբ. 3 կոպէկ:
- 309. 162 սաժ. 2 արշ. + 137 սաժ. 1 արշին:
- 310. 18 ժամ. 53 ըոպ. + 12 ժամ. 6 ըոպէ:
- 311. 5 փթ. 28 գրվ. + 8 փութ 11 գրուանք.:
- 312. 2 տակ. 32 վեդ. + 7 տակ. 17 վեդրո:
- 313. 3 վերստ 2 արշին + 2 վերստ 1 արշին:
- 314. 56 սաժէն 3 ոտնաչ. + 72 սաժէն 2 ոտնաչափ:
- 315. 24 շաբաթ 1 օր 10 ժամ + 12 շաբ. 4 օր 14 ժամ:
- 316. 24 փութ. 28 գր. + 6 փութ 11 գրուանքայ:
- 317. 5 տակառ 32 վեդրո + 3 տակառ:
- 318. 17 օգմ. 14 դաստ. 9 թերթ + 18 դաստ. 15 թերթ:
- 319. Քոյրը 14 տարեկան 5 ամսական էր. եղբայրը մեծ էր նրանից 3 տարի 6 ամիս, իսկ հօր տարիքը քրոջ և եղբօր տարիքի գումարից 18 տարի 7 ամսով աւելի էր: Քանի՞ տարեկան է հայրը:

320. Գինեվաճառը գնեց երեք տեսակ գինի. առաջին տեսակից՝ 12 տակառ 3 վեդրո, երկրորդ տեսակից՝ 12 տակառ 3 վեդրո աւելի առաջինից, իսկ երրորդից՝ 2 տակառ 5 վեդրո աւելի երկրորդից: Ընդամենը որքան գինի էր գնած:

321. Դպրոցի համար գնեցին առաջին անգամ 7 օգմայ 5 դաստայ թուղթ. երկրորդ անգամ՝ 12 օգմայ 3 դաստայ աւելի, իսկ երրորդ անգամ՝ 5 օգմայ 4 դաստայ: Ընդամենը քանի՞ թերթ թուղթ է գնած:

322. Արձաթագործը գնեց 3 կտոր արծաթ. առաջին

քաշն էր 4 գրվ. 15 լօտ, երկրորդը՝ 3 գրվ. 12 լօտով ծանր էր առաջինից, երրորդ կտոր արծաթը հաւասար է առաջին երկուսի քաշին: Ընդամենը որքան արծաթ էր գնել արծաթագործը:

ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՔՈՒԵՐԻ ՀԱՆՈՒՄ.

Բարդ անուանական թուելը միմեանցից հանելու համար հանելին պէտք է գրել նուազելու տակ այնպէս, որ միատեսակ անուանական թուերը միմեանց տակ գան. հանելու տակ զիծ պէտք է քաշել, իսկ ձախ կողմում գրուում է հանման նշանը, այսպէս, օրինակ.

$$\begin{array}{r} 28 \text{ սաժ. } 2 \text{ արշ.} \\ -12 \text{ « } 1 \text{ »} \end{array}$$

Հանումը պէտք է սկսել աջ կողմից, ամենափոքր չափերից և հետո հետո անցնել դէպի ձախ: Եթէ հանելու թիւը մեծ է նուազելու համապատասխան թուից, այն ժամանակ հարկաւոր է փոխ առնել մի միութիւն յաջորդ, աւելի բարձր անուանական թուից և, վերածելով ու աւելացնելով նուազելու համանուն թուի վրայ, շարունակել հանումը: Վերածելը և յետոյ աւելացնելը սովորաբար պէտք է մտքում կատարել.

$$\begin{array}{r} 28 \text{ սաժ. } 1 \text{ արշ.} \\ -12 \text{ » } 1 \text{ »} \\ \hline 16 \text{ սաժ. } 0 \end{array}$$

- 323. 25 ըուբ. 34 կոպ.—17 ըուբ. 45 կոպէկ:
- 324. 7 ոտնաչ. 8 մատնաչ.—4 ոտնաչ. 11 մատնաչ.
- 325. 35 գրուանքայ 22 լօտ—18 գր. 26 լօտ.
- 326. 11 ամիս 13 օր—6 ամիս 21 օր:
- 327. 8 փութ 25 գրուանքայ—4 փութ 28 գրվ.:
- 328. 95 սաժ. 2 արշ.—65 սաժ. 2 արշին:
- 329. 5 տակ. 6 վեդ.—1 տակ. 17 վեդրո:

- 330. 15 վերստ—13 վերստ 250 սաժէն:
- 331. 14 փութ 24 գր.—12 փութ:
- 332. 15 օգմայ 8 դաստ.—13 դաստայ:
- 333. 2 գր. 6 լօտ 1 մսխ.—1 գր. 18 լօտ 2 մսխ.:
- 334. 98 փութ—39 փութ 24 գրուանքայ:
- 335. 86 սաժ.—24 սաժ. 4 ոտնաչափ:
- 336. 72 փութ 24 գր.—45 փութ 18 գրուանքայ:
- 337. 24 շաբ. 3 օր 12 ժամ—21 շաբ. 4 օր 15 ժամ:
- 338. 56 սաժ.—38 սաժ. 4 ոտնաչ. 8 մատնաչափ:
- 339. 50 փութ—18 փութ 27 գր. 17 լօտ:
- 340. 6 օր—4 օր 16 ժամ 24 ըրպէ:
- 341. Տակառը իւղով քաշում է 24 փութ 25 գրվ., իսկ դատարկ տակառը՝ 5 փութ 32 գրուանքայ: Ո՞րքան իւղ կայ տակառում:
- 342. Արկղում կար 5 փութ 22 լոտ թէյ. նրանից վաճառեցին 2 փութ 17 գրուանքայ: Ո՞րքան թէյ մնաց արկղում:
- 343. Երկրագործը հնձեց 372 փութ 15 գրուանքայ խոտ, որից նա 104 փութ 25 գրվ. ծախեց, իսկ 6 փութ 32 գր. գործածեց իր անասունների համար: Ո՞րքան խոտ մնաց երկրագործի մօտ:
- 344. Վաճառականն ունէր 19 արշին 15 վերշոկ քաթան. մէկին ծախեց 5 արշին 6 վերշոկ, միւրին՝ 2 արշին 7 վերշոկ պակաս առաջնից: Ո՞րքան քաթան մնաց վաճառականի մօտ:
- 345. Թղթավաճառն ունէր 72 օգմայ 14 դաստայ սպիտակ և 45 օգմ. 18 դաստ. մոխրագոյն թուղթ: Ո՞րքանով սպիտակ թուղթը աւելի է, քան մոխրագոյնը:
- 346. Արծաթագործն ունէր 3 կտոր արծաթ. առաջինը քաշում էր 6 գր. 4 լոտ 2 մսխալ, երկրորդը՝ 2 գր. 12 լոտ 1 մսխ. պակաս առաջինից, իսկ երրորդը՝ 1 գր. 2 մսխ. թեթև էր երկրորդից: Ո՞րքան է կշռում երրորդ կտոր արծաթը:

ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՇՈՒԵԼԸ.

Նոր տարին սկսում է գեկտեմբերի 31-ի գիշերուայ ժամը 12-ից: Օրը բաժանւում է երկու հաւասար մասերի, որոնցից իւրաքա՛շիւրը տևում է 12 ժամ. օրուայ առաջին կէս մասը սկսւում է գիշերուայ ժամը 12-ից, կամ կէս գիշերից. օրուայ երկրորդ կէսը—ցերեկուայ ժամը 12-ից կամ կէսօրից: Եթէ, օրինակի համար, ժամացոյցը առաւօտեան ցոյց է տալիս 5-ից 10-ը ըրպէ անց, այդ նշանակում է, որ կէսգիշերից (կամ օրուայ սկզբից) անցել է 5 ամբողջ ժամ և էլի 10 ըրպէ: Իսկ եթէ ժամացոյցը, օրինակի համար, ցոյց է տալիս երեկոյեան ժամը իննից 45 ըրպէ անց, այդ նշանակում է, որ կէսօրից անցել է 9 ամբողջ ժամ և էլի 45 ըրպէ, իսկ կէս գիշերից (օրուայ սկզբից) անցել է 21 ժամ և 45 ըրպէ: Ճիշտ նոյն կերպ որոշւում է ամիսների օրերը և տարիները: Եթէ, օրինակի համար, այսօր հոկտեմբերի 26-ի ժամը 9-է, այդ նշանակում է, որ այդ ամսուայ սկզբից անցել է 25 լրիւ օր և հոկտեմբերի 26-ի օրուայ սկզբից 9 ժամ ևլն.:

347. Ո՞րքան ժամանակ է անցել օրուայ սկզբից, այսինքն կէս գիշերից, եթէ ժամացոյցը ցոյց է տալիս առաւօտուայ ժամը 4-ը, առաւօտուայ ժամը 9-ը, առաւօտուայ ժամը 11-ից 58 ըրպէ անց, կէս օրից յետոյ ժամը 3-ը, ցերեկուայ ժամը 4-ից 20 ըրպէ անց, երեկոյեան ժամը 7-ից 45 ըրպէ անց, երեկոյեան 10 ժամից 30 ըրպէ անց:

348. Ո՞րքան ժամանակ է անցել առաւօտուայ ժամը 5-ից մինչև կէսօրից յետոյ ժամը 2-ը, առաւօտուայ ժամը 8-ից մինչև կէսօրից յետոյ ժամը 4-ը, կէս գիշերուայ ժամը 2-ից մինչև կէսօրից յետոյ ժամը 6 ը, առաւօտուայ ժամը 7-ից 30 ըրպէ անց մինչև երեկոյեան 9 ժամից 30 ըրպէ անց, առաւօտուայ 6 ժամ 20 ըրպէից մինչև երեկոյեան

8 ժամ 45 րոպէն, առաւօտուայ 10 ժամ 40 րոպէից մինչև կէս գիշերուայ ժամը 3-ը:

349. Քանի՞ լրիւ ամիսներ և օրեր են անցել տարուայ սկզբից մինչև մարտի 12-ը, մինչև ապրիլի 25-ը, մինչև յունիսի 15-ը, մինչև սեպտեմբերի 27-ը, մինչև մայիսի 8-ը, մինչև դեկտեմբերի 26-ը:

350. Քանի՞ լրիւ ամիս և օր է անցել փետրուարի 17-ից մինչև յուլիսի 10-ը, մարտի 25-ից մինչև սեպտեմբերի 29-ը:

351. Ժամը քանի՞սն է, եթէ օրուայ սկզբից անցել է 6 ժամ 10 րոպէ, 11 ժամ 45 րոպէ, 14 ժամ 25 րոպէ, 18 ժամ 35 րոպէ, 23 ժամ 30 րոպէ:

352. Այժմ ժամը քանի՞սն է, եթէ առաւօտուայ ժամը 6-ից անցել է 9 ժամ, 5 ժամ 50 րոպէ, 12 ժամ 15 րոպէ, 14 ժամ 25 րոպէ, 23 ժամ 20 րոպէ:

353. Այժմ ո՞ր ամիսն է և ամսուայ քանի՞սն է, եթէ հասարակ տարուայ սկզբից անցել է 50 օր, 87 օր, 152 օր, 194 օր, 218 օր, 250 օր, 163 օր, 314 օր:

354. Աշակերտները դպրոց եկան առաւօտուայ 8 ժամ 20 րոպէին և մնացին այնտեղ 5 ժամ 10 րոպէ: Ժամը քանի՞սին նրանց արձակեցին:

355. Ժամացոյցը լարած էր կիրակի առաւօտեան 6 ժամ 20 րոպէին և բանեց 6 օր 8 ժամ 30 րոպէ: Ե՞րբ կանգնեց ժամացոյցը:

356. Ճանապարհորդը տուն վերադարձաւ օգոստոսի 24-ին: Ե՞րբ էր նա մեկնել տնից, եթէ ճանապարհորդել էր 135 օր:

357. Երեխան ծնուել է մարտի 17-ին, առաւօտեան 6 ժամ 15 րոպէին, իսկ մեռաւ նոյն տարուայ հոկտեմբերի 25-ին, երեկոյեան ժամը 10-ին: Ո՞րքան ժամանակ ապրեց երեխան:

358. Դպրոցում սովորաբար դասերը սկսուում են առաւօտեան 8 ժամ 45 րոպէին, իսկ վերջանում են 2 ժամ

45 րոպէին: Ո՞րքան ժամանակ պարապմունք է լինում աշակերտներին հետ, եթէ դասավիճակները տևում են 1 ժամ 15 րոպէ:

359. Գիւղացին մեկնեց աշխատելու մայիսի 14-ին, առաւօտուայ 5 ժամին, իսկ վերադարձաւ տուն 4 ամիս 15 օր 10 ժամ յետոյ: Ե՞րբ նա վերադարձաւ տուն:

360. Մեր դպրոցում ուսումը սկսուել է օգոստոսի 27-ին և վերջացել է հետևեալ ասրուայ մայիսի 16-ին: Ո՞րքան տևեց ուսումը:

361. Ձատիկը չի կարող լինել մարտի 22-ից վաղ և ապրիլի 25-ից ուշ: Ո՞ր ամսուայ և այդ ամսուայ քանի՞սից վաղ և ուշ չի կարող լինել Համբարձումը, Հոգեգալուստը, բարիկենդանը:

ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՔՈՒԵՐԻ ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ.

Բարդ անուանական թիւը վերացական թուի վրայ բազմապատկելու համար, հարկաւոր է երկրորդը գրել առաջինի ամենափոքր չափը տակ և տակը գրի՞ք քաշել ու ձախ կողմը նշանակել բազմապատկման նշան: Պէտք է բազմապատկել նախ մանր չափերը և յետոյ աստիճանաբար մեծ չափերը. վերջը ստացած փոքր չափերը պէտք է դարձնել մեծ չափերի, այսինքն անդրադարձում կատարել: Օրինակ.

12 օգմ. 8 դաստ.
 $\times 6$
72 օգմ. 48 դաստ. (արտադրեալը մինչև անդրադարձնելը).
74 օգմ. 8 դաստ. (արտադրեալը անդրադարձնելուց յետոյ).

- 362. ա. (14 ժամ 13 րոպ.) $\times 5$ բ. 15 սաժ. 2 ա. 2. $\times 8$
- 363. ա. (13 փուլ 12 գր.) $\times 8$ բ. 17 փուլ 13 գր. $\times 6$
- 364. ա. (13 սաժ. 5 օսն.) $\times 7$ բ. 15 տակ. 14 վեղրօ $\times 9$

- 365. ա. (14 օր 6 ժամ) × 8 բ. 5 վերս. 70 սաժ. × 5
- 366. ա. (15 սաժ. 6 ոտն.) × 12 բ. 9 փուլթ 16 գր. × 8
- 367. ա. (7 մղոն 23 վերս) × 8 բ. 2 օզմ. 9 դասս. × 4
- 368. ա. (25 օզմ. 12 դասս.) × 7 բ. 14 տակ. 6 շտ. × 7
- 369. ա. (3 օր 14 ժ. 20 բ.) × 9 բ. 3 փ. 7 գր. 17 մսխ. × 8
- 370. ա. (5 վ. 70 սժ. 4 ոտ.) × 4 բ. 15 սժ. 5 ոտ. 8 մաս. × 5

371. Որդին 6 տարեկան 7 ամսական է, իսկ հայրը 8 անգամ մեծ է որդուց: Քանի տարեկան է հայրը:

372. Խանութում 8 տոպրակ ալիւր կայ, իւրաքանչիւր տոպրակի մէջ 5 փուլթ 16 գրուանքայ: Ո՞րքան ալիւր կայ 8 տոպրակի մէջ:

373. Ո՞րքան տարածութիւն կանցնի 6 ոտն. 10 մասն. շրջապատ ունեցող անիւր, եթէ 9 պտոյտ է արել:

374. Ո՞րքան է կշռում մի դիւժին գդալը, եթէ ամեն մի գդալը կշռում է 3 լօտ 1 մսխալ:

375. Գնած է 8 արշին մահուդ, իւրաքանչիւր արշինը 3 բուբլի 80 կոպէկով և 4 արշին մետաքսէ կտոր, իւրաքանչիւր արշինը 2 բուբլի 70 կոպէկով: Գնողը տուեց մի 100 բուբլիանոց: Ո՞րքան փող պէտք է յետ ստանայ:

376. Վարպետն ունէր 8 գրուանքայ 21 լօտ 1 մսխ. արծաթ. նա պատրաստեց մի դիւժին գդալ, ամեն մէկը 3 լօտ 1 մսխ. արծաթից: Ո՞րքան արծաթ մնաց վարպետի մօտ:

ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՅՈՒՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄ.

Բարդ անուանական թուերի բաժանման ժամանակ պատահում է երեք դիպուած.

ա. Բարդ անուանական թիւր բաժանել վերացական թուի վրայ Այդ դէպքում հարկաւոր է բաժանումն սկսել ամենաբարձր չափից և հետզհետէ անցնել աւելի փոքր չափերի.

$$\begin{array}{r} 12 \text{ փուլթ. } 15 \text{ գր.} \quad | \quad 3 \\ -12 \quad \text{»} \quad 15 \quad \text{»} \quad | \quad 4 \text{ փուլթ } 5 \text{ գրվ.} \\ \hline 0 \quad \quad \quad 0 \end{array}$$

Եթէ բարձր չափերի բաժանման ժամանակ մնացորդ ստացուի, հարկաւոր է այդ մնացորդը վերածել իրենից յետոյ եկող փոքր չափի, ստացածի վերայ աւելացնել նոյնատեսակ չափ, եթէ կայ և ապա շարունակել բաժանումը: Օրինակ.

$$\begin{array}{r} 5 \text{ վ. } 100 \text{ ս.} \quad | \quad 4 \\ -4 \quad \quad \quad | \quad 1 \text{ վ. } 150 \text{ ս.} \\ \hline 1 \text{ վ. } = 500 \text{ ս.} \\ +100 \text{ ս.} \\ \hline 600 \text{ ս.} \\ 600 \text{ ս.} \\ \hline 0 \end{array}$$

- 377. (5 գր. 30 լօտ):5 (35 օզմ. 4 դասս.):8=
- (20 տակ. 35 վեդ.):5 (36 շաբ. 4 օր.):8=
- (124 սաժ.) :3 (3 տարի 3 ամիս.):9=
- (56 փուլթ 10 գր.):9 (22 գրվ. 3 լօտ) :7=
- (3 օզմա 23 թ.):7 (14 տակ. 4 վեդրօ):6=

բ. Բարդ անուանական թիւր բաժանել պարզ անուանական թուի վրայ: Այս դէպքում պէտք է բաժանելին վերածել բաժանարարին համանուն մանր չափերի և ապա բաժանել իբրև հասարակ թուեր:

- 378. ա. (3 սաժ. 2 ոտն. 4 մասն.): (14 մասն.).
- բ. (8 ժամ. 20 բոպ.): (25 բոպ.).
- գ. (10 բուբլի 40 կոպէկ): (80 կոպէկ).
- դ. (1 օզմ. 8 դասս. 10 թերթ): (31 թերթի).
- ե. (7 գր. 13 լօտ 1 մսխ.): (8 մսխ.).

գ. Բարդ անուանական թիւր բաժանել բարդ անուանական թուի վրայ Այս դէպքում պէտք է ինչպէս բաժանելին, նոյնպէս և բաժանարարը վերածել համանուն

փոք: չափերի և ապա բաժանել իբրև հասարակ թուեր:

17(սաժ.) 1 արշ. 8 վերջ.:1(արշ.) 12 վերջ.==840 վ. 28 վ.	
×3 արշ.	×16 վերջ.
51 արշ.	16 վերջ.
+1 »	+12 »
52 (արշ.)	28 վերջ.
×16 վերջ.	
312 վերջ.	
+52 »	
832 վերջ.	
+8 »	
840 վերջ.	

379. ա. (1 գր. 1 լօտ 1 մսխ.): (3 լօտ 1 մսխ.).
բ. (15 սաժ. 2 արշ. 7 վերջ.): (1 արշ. 7 վերջ.).
գ. (1 օզմ. 5 դաստ.): (1 դաստ. 6 թիւթի).
դ. (19 սաժ 1 արշ. 8 վերջ.): (2 արշ. 7 վերջ.).
ե. (10 ժ. 40 բոպ.): (1 ժ. 4 բոպ.).

380. Երկաթալարի երկարութիւնն է 75 սաժէն 3 ստանչափ: Դա բաժանեցին երկու մասի այնպէս, որ մի մասը երեք անգամ միւսից երկար եղաւ: Ո՞րքան է իւրաքանչիւր մասը երկարութիւնը:

381. Ինն տոպրակի մէջ 45 փութ. 5 գրվ. 2 լօտ ալիւր կայ: Ո՞րքան ալիւր կայ իւրաքանչիւր տոպրակում, եթէ բոլորի միջի ալիւրը հաւասար էր:

382. 5 արշին 5 վերջոկ մետաքսէ կտորին վճարեցին 25 բուբլի 50 կոպ.: Ո՞րքան արժէ այդ կտորի մի արշինը:

383. Արծաթագործը 2 գրվ. 17 լօտ արծաթից պատրաստեց բաժակներ, որոնց զիւժինը կշռում է 3 գրվ. 12 լօտ: Ո՞րքան բաժակ պատրաստեց արծաթագործը:

384. Երեք առևտրական իւր գնեցին և բաժանեցին միմեանց մէջ. առաջինը վերցրեց 5 փութ 16 լօտ, երկրորդը՝ 4 անգամ աւելի, իսկ երրորդը՝ 3 անգամ պակաս,

քան առաջին երկուսը միասին: Ո՞րքան իւր ստացաւ երրորդ առևտրականը:

385. Մի տակառում կար 6 փութ 28 գրուանքայ շաքար, իսկ միւսում—4 փութ 24 գրվ. 16 լօտ: Ո՞րքան շաքար մնաց երկու տակառում միասին, եթէ առաջինից վերցրել են ամբողջ շաքարի չորրորդ մասը, իսկ երկրորդից՝ ութերորդ մասը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐ.

386. Վաճառականը իւրաքանչիւր 20 գրվ. ձէթը վաճառում էր 3 բուբլի 40 կոպէկի, իսկ ինքը գնում էր իւրաքանչիւր 10 գրուանքան 1 բուբ. 50 կոպէկով: Ամբողջ ձէթը վաճառուելուց յետոյ նա 8 բուբլի գուտ օգուտ ստացաւ: Գանի՞ փութ ձէթ վաճառեց վաճառականը:

387. 9 արշին մետաքսէ կտորին վճարեցին 12 բուբ. 60 կոպէկ: Ո՞րքան արժէ այդ կտորի մի ստանչափը:

388. 13 արծաթէ գդալը կշռում է 3 գրուանքայ 12 լօտ 1 մսխայ: Որոշել 6 այդպիսի գդալների քաշը:

389. Առևտրականը փոխեց 2 փութ շաքարը, որի գրուանքան արժէր 16 կոպէկ և 1 փութ 8 գրուանքայ իւրը, որի գրուանքան արժէր 40 կոպէկ, 20 գրուանքայ թէյի հետ: Ո՞րքան արժէր թէյի մի գրուանքան:

390. Ոսկերիչը գնեց արծաթի երկու ձուլուածք, մէկը նրանցից քաշում էր 6 գրվ. 16 մսխայ, իսկ միւսը՝ 5 անգամ աւելի: Ամբողջ արծաթից նա շինեց 4 հաւասար քաշ ունեցող մատուցարան: Ո՞րքան էր քաշում իւրաքանչիւր մատուցարան:

391. Կազմարարը 1 օզմա 15 դաստայ թղթից պատրաստեց տետրեր, իւրաքանչիւրը 6 թերթից և վաճառեց երկու առևտրականի: Ո՞րքան տետր գնեց իւրաքանչիւր առևտրական, եթէ առաջինն ստացաւ 60 տետր աւելի երկրորդից:

392. Պղնձագործը 5 փուլ 12 գրվ. պղնձից պատրաստեց 6 ինքնաեռ և 8 կաթսայ. իւրաքանչիւր կաթսայի համար գործածեց 5 գրվ. պղնձ աւելի, քան իւրաքանչիւր ինքնաեռի համար: Ո՞րքան է կշռում մի կաթսան և մի ինքնաեռը:

393. Մայրը գնեց երկու կտոր քաթան. մէկը 10 արշ. 8 վերշ. էր, իսկ միւսը 3 անգամ պակաս: Ամբողջ քաթանից մայրը շապիկներ կարեց և իւրաքանչիւրի համար գործ ածեց 3 արշ. 8 վերշ.: Քանի՞ շապիկ կարեց մայրը:

394. Աւաղանը, որ տանում է 882 վեդրո ջուր, լըցւում է 2 ժամ 6 րոպէսում: Քանի՞ վեդրո ջուր է լցւում մի ժամում:

395. Շոգեհնան անցաւ երկու քաղաքների միջի հեռաւորութիւնը 14 ժամում: Սկզբի 6 ժամի ամեն մի ժամում նա անցնում էր 11 վերստ 80 սափ., իսկ մնացած իւրաքանչիւր ժամում՝ 13 վերստ 70 սափ.: Ո՞րքան է քաղաքների միջի հեռաւորութիւնը:

396. Վարպետը գնեց երկու հին արծաթեայ մատուցարան. մէկը նրանցից կշռում էր 4 գրվ. 20 մսխ., իսկ միւսը՝ 4 անգամ աւելի: Այդ ամբողջ արծաթից նա պատրաստեց 4 հաւասար քաշ ունեցող վազ: Ո՞րքան է իւրաքանչիւր վազի քաշը:

397. Գիւղացին ծախեց շուկայում 2 սայլ շաղգամ. առաջին սայլի վրայ կար 19 փուլ, իսկ երկրորդի վրայ՝ 3 փուլ 20 գրվ. պակաս: Ո՞րքան փող ստացաւ նա, եթէ շաղգամի իւրաքանչիւր փուլը վաճառեց 32 կոպէկով:

398. Արծաթագործը պատրաստեց 6 արծաթ շղթայ և 22 խաչ. իւրաքանչիւր շղթայի համար գործ ածեց 5 լօտ 2 մսխ. արծաթ, իսկ իւրաքանչիւր խաչի համար՝ 4 լօտ 1 մսխ. պակաս: Ո՞րքան արծաթ գնաց բոլոր շղթաների և խաչերի համար:

399. 14 թոփ կտորից կարեցին 147 պալտօ և իւրաքանչիւրի համար գործ ածեցին 5 արշ. 2 վերշ. կտոր: Քանի՞ արշին էր իւրաքանչիւր թոփը:

400. Խանութպանը խառնեց երկու տեսակ շաքարաւազ. 14 գրվ. 16 լօտ մի տեսակից՝ գրուանքան 16 կոպէկանոց և 15 գրվ. 16 լօտ միւս տեսակից, գրուանքան 14 կոպէկանոց: Վաճառելիս նա 73 կոպ. օգուտ ստացաւ: Ո՞րքանով ծախեց նա խառնուրդի գրուանքան:

401. Հիւանը սղոցով կտրեց 4 սափ. 5 ոտն. 3 մատն. երկարութեամբ գերանը 3 մասի այնպէս, որ առաջին մասը երկրորդից երկար էր 1 ոտն. 2 մատն., իսկ երկրորդ մասը երրորդից երկար էր 2 ոտն. 5 մատն.: Ո՞րքան էր գերանի իւրաքանչիւր մասի երկարութիւնը:

402. Կառքի յետևի անիւի շրջապատն է 2 սափ. 1 ոտն. 10 մատն., իսկ առջևի անիւինը՝ 3 ոտն. 2 մատն. պակաս: Ո՞րքան պտոյտ կանէ յետևի անիւն այն ժամանակ, երբ առաջինն անում է 5 պտոյտ:

403. Գիւղի մի ծայրից մինչև միւս ծայրը 1 վերստ 220 սափ. է: Երկու գիւղացի դուրս եկան միմեանց հանդէպ այդ գիւղի տարբեր ծայրերից. մէկը մի րոպէսում անցնում էր 4 սափ. 1 արշ., իսկ միւսը՝ 4 սափ. 2 արշ.: Ո՞րքան ժամանակից յետոյ նրանք իրար հանդիպեցին:

404. Բանւորուհին իր ամսական աշխատանքի կէս մասը ծախսում է սնունդի, իսկ 5-րդ մասը՝ ուրիշ կարիքների համար: Ո՞րքան ոտճիկ է ստանում նա ամսական, եթէ, բացի սնունդի համար ծախսելուց, ուրիշ կարիքների համար գործադրում է 1 րուբ. 90 կոպ.:

405. Արծաթագործը 22 գրվ. 16 լօտ արծաթից պատրաստեց 18 կանթեղ և 18 մոմակալ. իւրաքանչիւր մոմակալի համար 10 լօտ աւելի արծաթ գործածեց, քան իւրաքանչիւր կանթեղի: Ո՞րքան է կշռում իւրաքանչիւր կանթեղ և իւրաքանչիւր մոմակալ:

406. Ոսկերիչը գնեց 4 գրվ. 10 լօտ արծաթը և 9 լօտ 2 մսխ. ոսկին 156 րուբ.: Ո՞րքան արժէ արծաթի մի գրուանքան, եթէ ոսկին թանգ է արծաթից 18 անգամ:

407. Խանութպանը խառնեց գրուանքան 2 րուբ. 35

կողէկանոց 16 գրվ. թէյը գրուանքան 1 ըուբ. 60 կողէկանոց 14 գրուանքայ թէյի հետ: Ո՞րքանով պէտք է ծախել խառնուրդի գրուանքան, որպէս զի ստացուի 10 տոկոս օգուտ:

408. Դերձակուհին գնեց մի թոփ կտոր և կամեցաւ կարել 9 զգեստ. բայց յետոյ տեսաւ, որ իրեն կ'պակասի 19 արշին 2 վերշոկ: Այն ժամանակ նա հաշուեց, որ թոփից գուրս կ'գայ 7 զգեստ և դարձեալ կ'մնայ 5 արշին 2 վերշոկ: Քանի՞ արշին էր թոփը:

409. Գիւղի խնութիւնը գնեց քաղաքում առաջին անգամ 3 փութ շաքարը և 5 գրուանքայ 17 լօտ թէյը 34 ըուբլի 65 կողէկով: Երկրորդ անգամ նա գնեց քաղաքում միևնոյն գներով 6 փութ շաքարը և 9 գրվ. 22 լօտ թէյը 64 ըուբլի 90 կողէկով: Ո՞րքան արժէ շաքարի փութը և թէյի գրուանքան:

410. Երեք շտեմարանում 648 փութ 18 գրուանքայ ալիւր կայ: Առաջին շտեմարանում կար երկու անգամ աւելի ալիւր, քան երկրորդում, իսկ երրորդ շտեմարանում երեք անգամ աւելի, քան առաջինում: Ո՞րքան ալիւր կար իւրաքանչիւր շտեմարանում:

411. 3 փութ ալիւրին և 12 փութ հաճարին պէտք է վճարել 14 ըուբլի 40 կողէկ, իսկ 6 փութ ալիւրին և 8 փութ հաճարին՝ 12 ըուբլի 80 կողէկ: Ո՞րքան արժէ մի փութ ալիւրը և մի փութ հաճարը:

412. Վաճառականը ծախեց 2 կտոր գրուայր 29 ըուբլի 40 կողէկով: Առաջին կտորը 4 արշին 6 վերշոկ էր, իսկ երկրորդը՝ 3 արշին 8 վերշոկ: Ո՞րքան արժէ իւրաքանչիւր կտոր գրուայր մի արշինը, եթէ առաջին կտոր գրուայր արշինը երկու անգամ աւելի թանկ էր, քան երկրորդ տեսակ գրուայր արշինը:

413. Ո՞րքան պղինձ և ո՞րքան անագ է պահանջուում 18 փութ 36 գրուանքայ զանգակ ձուլելու համար, եթէ 50 մաս պղինձի հետ հարկաւոր է ձուլել 13 մաս անագ:

414. Վարպետն ունէր 2 կտոր պղնձ. նրանցից մէկը աւելի էր միւսից 1 փ. 5 գրվ.: Փոքր կտորից նա պատրաստեց 8 կոնք. իսկ մեծից՝ մ. կնոյն քաջն ունեցող 11 կոնք: Ո՞րքան էր իւրաքանչիւր կտոր պղնձի քաշը:

415. Գործարանում բանւորը, բանւորուհին և երեխան ստանում են միասին օրական 2 ըուբ. 40 կողէկ. եթէ բանւորը ստանար 1 ըուբ. 15 կող. պակաս, իսկ երեխան՝ 25 կող. աւելի, այն ժամանակ երեքի վճարը հաւասար կլինէր: Ո՞րքան էր ստանում նրանցից իւրաքանչիւրն օրական:

416. Մանրավաճառը գնեց պարտիզպանից 4 տոպրակ խնձորը 3 ըուբ. 20 կողէկով, իսկ ծախեց իւրաքանչիւր տասնեակը 8 կող.: Նա ստացաւ բոլոր խնձորից 1 ըուբլի 60 կող. օգուտ: Ո՞րքան խնձոր կար իւրաքանչիւր տոպրակի մէջ:

417. Երեք դիւժին թէյի և 2 դիւժին սեղանի գդալները կշռում են 9 գրվ. 20 լօտ, իսկ 1 դիւժին թէյի և 1 դիւժին սեղանի գդալները՝ 4 գրուանքայ 4 լօտ: Ո՞րքանով սեղանի գդալը ծանր է թէյի գդալից:

418. Գիւղացին վաճառեց 9 օտ բլու կարագ, գրուանքան 45 կողէկով: Ո՞րքան կաթ էր նա գործածել, եթէ իւրաքանչիւր 2 փութ 20 գրվ. կաթից ստացուում է 20 գրվ. սեր, իսկ իւրաքանչիւր 5 գրվ. սերից ստացուում է 1 գրվ. 8 լօտ կարագ:

419. Դերձակուհին գնեց 37 արշին 8 վերշոկ կտոր, արշինը 1 ըուբլի 92 կողէկով: Այդ կտորից պատրաստած զգեստներից իւրաքանչիւրը վաճառեց 45 ըուբլով: Ո՞րքան նա վերցրեց զգեստ կարելու աշխատավարձ, եթէ իւրաքանչիւր զգեստի համար գործածուեց 12 արշին 8 վերշոկ կտոր և եթէ բոլոր զգեստների համար մանր-մունր ծախք եղած է 14 ըուբլի 40 կողէկ:

420. Զուլհակը երեք ամսում աշխատեց 34 ըուբլի 32 կողէկ, ստանալով իւրաքանչիւր արշին քաթանի համար իբրև աշխատավարձ 8 կողէկ: Մի ամսում նա աշխատեց 24 օր, միւս ամսում՝ 22 օր և երրորդ ամսում՝ 20 օր: Քանի՞ արշին կտաւ գործեց նա ամեն մի ամսում:

Յ Ա Ն Կ.


1. ԹՈՒԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ. Բանաւոր հաշիւ.	1—10
2. Միաւորների և տասնեակների գումարումը և հանումը միջև հարիւրեակի սահմանը.	11—10
3. Միաւորների և տասնեակների գումարումը և հանումը՝ անցնելով հարիւրեակի սահմանը.	20—30
4. Բազմապատկում, չափում և բաժանում լրիւ տասնեակների.	30—44
5. Բազմապատկում, չափում և բաժանում երկանշան թուերի.	45—54
6. Գումարում և հանում գերօյով վերջացող երկանշան և եռանշան թուերի.	55—60
7. Բազմապատկում, չափում և բաժանում գերօյով վերջացող եռանշան թուերը.	60—81
8. Խնդիրներ կրկնութեան համար. Թուահաշիւ կարգերով սակէ սակ	81—84
9. Գումարում, հանում, բազմապատկում, բաժանում.	85—101
10. Չորս գործողութեան վերաբերեալ խնդիրներ՝ 1000-ի սահմանում. Առանձնաշատուկ խնդիրներ.	1—32 102—104 105
11. I. Միութեան վերածելը.	33—46 105—107
12. II. Մեծացնել և փոքրացնել մի քանի միութիւնով կամ մի քանի անգամ.	47—51 107—108

13. III. Թիւը բաժանել հաւասար մասերի	52—79 109—112
14. IV. Իրերի փոխանակութիւն	74—76 112—113
15. Կրկնութիւն.	77—87 113—115
16. V. Որոշել զանազան առարկաների քանակը, երբ նրանք հաւասար են ու երբ յայտնի է յրանց ընդհանուր արժէքը և իւրաքանչիւրի արժէքն առանձին:	88—92 115—116
17. VI. Օգուտ և փաստ.	93—102 115—118
18. VII. Ապրանքների փոխափնում.	103—107 119—120
19. VIII. Համեմատական բաժանում.	108—113 120—121
20. Կրկնութիւն	114—120 121—122
21. IX. Գտնել մասերը, երբ յայտնի է ամբողջը և գտնել ամբողջը երբ յայտնի են մասերը.	121—147 122—124
22. X. Հանդիպումն	148—154 124—126
23. XI. Մէկը հետապնդում է միւսին	155—159 126—127
24. XII. Որոշել ժամանակը, երբ փոփոխում է աշխատաւորական ոյժի քանակը	160—164 128—129
25. XIII. Ձրամբար.	165—170 129—131
26. Կրկնութիւն.	171—187 131—133
27. XIV. Խօսուող.	188—199 133—136
28. XV. Համեմատութիւն.	200—212 137—139
29. XVI. Ենթադրութիւն.	213—220 140—142
30. XVII. Ա. պայմանական.	221—224 142—143
31. XVIII. Բ. պայմանական.	225—229 143—144
32. Կրկնութիւն.	230—243 144—146
33. Բարդ անունական թուեր	
34. Վերածում և անգրգարձում(բան.)	244—266 146—148
35. Վերածում (գրաւոր).	267—286 148
36. Անգրգարձում (գրաւոր).	287—306 149
37. Անունական թուերի գումարում.	307—322 149—151
38. Անունական թուերի հանում.	323—346 151—152
39. Ժամանակի հաշուելը.	347—361 153—155
40. Անունական թուերի բազմապատ.	362—376 155—156
41. Անունական թուերի բաժանում.	377—385 156—159
42. Ընդհանուր խնդիրներ	386—420 159—167

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր .

15. 250 փութ.	49. 999 ըուբ.	81. 65 արշին
16. 3 ը. 50 կոպ.	50. 175 փութ	82. 31 արշին
17. 50 երեխայ	51. 120 գլուխ	83. 40 ը. 55 ը.
18. 235 ըուբլի	53. 125 ը. 181 ը.	84. 52 ը., 260 ը.,
19. 13 զեսեատին	220 ըուբլի	312 ըուբլի.
20. 270 ը., 540 ը.	54. 250խնձ., 280խ.	85. 315 ըուբ.
21. 120, 240, 360	և 295 խնձոր	86. 9 ը. 94 կոպ.
22. 28 ըուբլի	55. 222, 274, 424	87. 43կ., 55կ., 81կ.
23. 4 ըուբլի	56. 57 հաւ, 119 ճուռ	89. 50 մարդ
24. 9 զեսեատին	57. 104 և 81	90. 27 գրուանքայ
25. 11-ը՝ 1 ը. 20 կոպ.	58. 8 ը. և 6 ը.	91. 50խնձ., 80 տանձ
26. 30 ըուբլի	59. 4 ը. և 8 ը.	92. 57 արշ., 73 արշ.
27. 129 ըուբլի	60. 128 գրվ.	94. 20 ըուբլի
28. 232 ոչխար.	61. 111 զիւղ—33 տ.	95. 8 ըուբլի
29. 430 մատիտ	63. 60 ը., 180 ը.	96. 11 կոպէկ
30. 30 արշին.	65. 232 վեգ., 533 վ.	97. 70 վերջոկ
31. 225 փութ	66. 252, 304	98. 42 ըուբլի
32. 21 փութ	67. 70 փութ	99. 78 ըուբլի
34. 360 արշի	68. 7 աղջ., 35 տղայ	100. 45 փութ
35. 9 ժամ	69. 27, 162	102. 126 փ. հաց
36. 5 օր	70. 16 կ. և 44 կ.	104. 1 ը., 3 ըուբլի
37. 1 ը. 80 կ., 1 ը. 75 կ.	71. 38 արշ., 60 արշ.	105. 9 կ., 15 կոպ.
38. 22 բան.	72. 14 աղջ., 70 տղայ	106. 24 ը., 6 ըուբ.
39. 20 բան.	73. 85 ըուբ. 370 ը.	107. 9 ը., 4 ըուբլի
40. 10 օր	74. 4 ըուբլի	109. 360 ը., 270 ը.,
42. 264 փութ	75. 240 ըուբլի	325 ըուբ.
43. 8 մարդ	76. 8 գրուանքայ	110. 1 ը. 36 կ., 1 ը.
44. 900 վերստ	77. 7 ըուբ.	60 կ., 2 ը. 24 կ.
45. 16 ըուբլի	78. 125 պտոյտ	111. 5 տետր աւելի
46. 300 սաժէն	79. 280 ըուբ.	112. 112 ը., 324 ը.
48. 342 ըուբլի	80. 10 ըուբ.	113. 4 ը. 50 կոպ.,
		10 ը. 50 կոպ.
		114. 216 ը., 270 ը.,
		405 ըուբ.

115. 1 կ. օգուտ	170. 1 ժամ 27 ըուպ.	209. 40 արշ., 40 գր.
116. 8 ը. և 32 ը.	171. 50 գրվ. թէյ	210. 850 ըուբլի
117. 12 ը., 24 ը. և	172. 116 ըուբ., 130	211. 12 ըուբլի, 422
36 ը.	ըուբ.	ըուբլի
118. 19 կին, 57 տղմ	173. 25 կոպ.	212. 15 թոփ, 899
119. 5 ը. և 3 ըուբ.	174. 4 ըուբ. 56 կ.	ըուբլի
120. 50 արշին և	175. 3 ըուբ., 7 ը.	214. 30 և 20 տոմս
150 արշին.	176. 27 ըուբ.	215. 6 կին և 5 տը-
133. 52 աշակ.	177. 10 սաժ., 20	զամարդ
134. 203 փ., 290 փ.	սաժ.	216. 17 դրամ — 5
135. 130 ըուբ.	178. 2 ըուբ. 20 կ.	կոպ. և 19 դը-
136. 3 ըուբ.	6 ըուբ. 25 կ.	րամ—3 կոպ.
144. 49 տար.	180. 1 ը. 62 կոպ.	217. Ա. տես. կի 15
145. 625 փութ	4 ը. 20 կոպ.	գրվ., Բ. տե-
146. 30 կոպ.	181. Երեկ. ժ. 8-ին	սակի 23 գրվ.
147. 48 արշ.	182. 16 ըուպէ	218. 50 և 40
150. 252 վերստ	183. Երեկ. ժ. 7-ին	219. 45 գրվ. և 15
151. 20 վերստ	184. 7 ժամուժ	գրուանքայ
152. 6 ժամ	185. 35 գրվ.	220. 65 և 35
153. 15 վ., 180 վ.	186. 56 ըուպէ	222. 65 կոպէկ
23 վ., 276 վ.	187. 16 կոպ.	223. 92 հայելի
154. 2 ժամ	189. 5 կոպ.	224. 19 օր
156. 28 ժամ, 6 ժ.	190. 6 ըուբ. օգուտ	226. 14 արշին
Երեկոյեան	192. 18 գրվ., 9 գրվ.	227. 9 գրվ.
157. 30 վերստ	193. 70 գրվ.	228. 38 աշակ.
158. 28 վերստ	194. 18 գրվ.	229. 270 ըուբ.
159. 825 վ. ըստ	196. 76 յարգի	230. 11 կոպ.
161. 6 օր	197. 60 յարգի	231. 1 ըուբ., 3 ը.
162. 19 ըուպէ	198. 1 գ. 14 ը. 2	232. 24 տետր և 32
163. 15 օր	մսխ. և 2 գ. 29	տետր
164. 6 օր	լ. 1 մսխ.	
166. 36 ժամ	205. 44 ըուբ., 52 ը.	233. 37 հատ
167. 3 ժամ	206. 3 ըուբ., 8 ը.	234. 2 ըուբ. և 6 ը.
168. 45 ժամ	208. 15 կոպ.	235. 3 ըուբ. և 7 ը.
169. 48 ժամ		



236. 64 ձև.	396. 5 գրվ. 25 մսխ.	1 գրվ. թէյը—
237. 57 օր.	397 4 ր. 96 կոպ.	3 ր. 20 կոպ.
238. 3 ր. 60 կոպ.	398. 63 լօտ 1 մսխ.	410. 72 փ. 2 գրվ.,
239. ա) 20 ժամ բ) 260 րուբ.	399. 53 արշին 13 վերջով	144 փ. 4 գրվ. 432 փ. 12 գր.
240. 6 ր., 2 րուբ.	400. 18 կոպ.	411. 80 կոպ. և 1 ր.
241. 6 գրվ., 12 գրվ.	401. I. 12 սա. 8 մտ. II. 11 սան. 6 մասն.	412. 4 ր. 80 կոպ. և 2 ր. 40 կոպ.
242. 72 յարգի	III. 9 սա. 1 մասն.	413. 3 փ. 36 գրվ. և 15 փութ
243. 60 յարգի	402. 4 պոռոյա	414. 3 փ. և 4 փ. 5 գրվ.
386. 10 փութ	403. 1 ժ. 20 րուպէ	415. 25 կոպ., 50 կ. և 1 ր. 65 կոպ.
387. 60 կոպ.	404. 9 ր. 50 կոպ.	416. 159 խնձոր
388. 1 գրվ. 18 լօտ	405. 15 լօտ և 25 լ.	417. 3 լ. 2 մսխ.
389. 1 ր. 60 կոպ.	406. 2 լ. արժէ 1 ր. 1 գրվ.—16 ր.	418. 10 փութ
390. 9 գրվ. 24 մսխ.	407. 2 ր. 20 կոպ.	419. 48 ր. 60 կոպ.
391. 100 և 40 ա. ար	408. 90 արշ.	420. 156 արշ., 143 արշ., 130 արշ.
392. 13 գրվ. և 18 գրվ.	409. 1 փ. շաբ.—5 ր. 65 կոպ.	
393. 4 շապիկ		
394. 420 վեգրօ		
395. 172 փ. 40 սժ.		



1373

Հանրային գրադարանի «Գրադարան»-ի գրադարանի կազմակերպության կողմից

ԳՐԱԿԱՆ ԲԱՆԿ

1. Գրադարանի խմբակները 40 էջ
2. Գրքերի խմբակները 25 էջ
3. Տարբերակները ըստ ժանրի 20 էջ
4. Գրքերի խմբակները ըստ ժանրի 50 էջ
5. Անտիկվարիատի և հարակից գրքերի 40 էջ
6. Արվեստի 15 էջ
7. Գրքերի խմբակները ըստ ժանրի 8 էջ
8. Արվեստի 25 էջ
9. Հոդվածներ և հոդվածներ 20 էջ
10. Գրքեր 10 էջ
11. Արվեստի խմբակները 50 էջ

Գ. ՆԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱԿՆԵՐԸ

15803

306

5168

2013

«Հանրային գրադարան»



NL0064695

